Azg

Azg armenian daily

28 ԱՊՐԻԼ 1999 ՇԱԲԱԹ # 76 (1821)

«Եղեռնը ժխտելը եղեռնի վերջին փուլն է»

150 մասվորականների կոչը Թուրքիային՝ «Վաշինգտոն փոստում»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 27 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Մասվորականության ավելի քան 150 ներկայացուցիչներ, որոնց մեծամասնությունը թուրքական ծագում ունեցող ամերիկացիներ են, բաց նամակ են տարածել՝ ուղղված թուրքական կառավարությանը, որտեղ կոչ են անում ճանաչել 1915 թվականի հայոց ցեղասպանությունը:

«Եղեռնը ժխտելը նպատակ ունի աղավաղել պատմությունը եւ զոհերին հրեա դարձնել, միաժամանակ ռեաբիլիտացնելով նրանց, ովքեր ցեղասպանություն են կատարել: Եղեռնը ժխտելը եղեռնի վերջին փուլն է», ասվում է «Վաշինգտոն փոստ» թերթում հրապարակված նամակում:

Նամակի հեղինակների համաձայն, ներկայումս Թուրքիան ֆինանսավորում է թուրքագիտության ամբիոնները ԱՄՆ մի շարք համալսարաններում, որպեսզի հնարավորություն ունենա ճնշում գործադրելու 1915 թվականի եղեռնին եւ դրան վերաբերող Թուրքիայի պատմության ժամանակաշրջանին առնչվող հարցերում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ռոբերտ Քոչարյան. Մինսկի խմբի վերջին ծրագիրը շահավետ է Ադրբեջանի համար

ՀՀ նախագահի հարցազրույցը «Թուրան» գործակալությանը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 27 ԱՊՐԻԼ, ՍՆՍՐՔ. Նախօրեին Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը ելույթ է ունեցել Վաշինգտոնի Քարնեգիի հիմնադրամում: Նախագահի ելույթը կարճ է եղել, որից հետո նա պատասխանել է ներկաների հարցերին:

Քոչարյանն «օգտակար» է համարել Հարավային Կովկասի պետությունների ղեկավարների հետ կիրակի օրը կայացած հանդիպումը, որին մասնակցել են նաեւ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի եւ Թուրքիայի արտգործնախարարները: Մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես է եկել հայտարարությամբ, եւ հանդիպման ընթացքում բանավեճեր չեն եղել: «Հուսով ենք, որ հաջորդ անգամ հանդիպումն այլ կերպ կկազմակերպվի, եւ կարծիքներ փոխանակելու հնարավորություն կլինի», ասել է Քոչարյանը, ափսոսանք հայտնելով այն առնչությամբ, որ հանդիպմանը շատ փոքր ժամանակ է հատկացվել՝ մեկ ժամից պակաս:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը Ռոբերտ Քոչարյանը նշել է, որ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը ընդունել են ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած վերջին ծրագիրը, թեեւ դա «չափազանց դժվար որոշում է եղել»:

Միեւնույն ժամանակ Քոչարյանը պատմել է իր նախածեռնության Վրաստանի տարածքում Ադրբեջանի եւ Հայաստանի պաշտպանության նախարարների երկու շաբաթ առաջ կայացած հանդիպման մասին: «Ես նման նախաձեռնությամբ հանդես եկա Ալիեւի հետ Մոսկվայում կայացած հանդիպման ժամանակ», ասել է Քոչարյանը եւ ավելացրել, որ շուտով եւս մեկ նման հանդիպում կկայանա սակայն արդեն Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի հրամանատարի մասնակցությամբ: Այդ հանդիպումների գլխավոր նպատակը կողմերի միջեւ փոխվստահության մթնոլորտ ստեղծելու հնարավորությունների ընդլայնումն է ճակատում զինված ընդհարումները կանխելու նպատակով: «Ես ուրախ եմ, որ Ալիեւն ընդունեց իմ առաջարկությունը», ասել է Քոչարյանը:

Տես էջ 2

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ

«Ռուսաստանը փոփոխություններ է մտցնում իր ռազմական դոկտրինայի մեջ»

ՄՈՍԿՎԱ, 26 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ռուսաստանի պաշտպանության նախարար Իգոր Սերգեեւը հանդես է եկել նոր նախազգուշացմամբ՝ կապված Հարավսլավիայի դեմ ՆԱՏՕ-ի ռազմարշավի հետեւանքների հետ: Սերգեեւը հայտարարել է, որ Ռուսաստանը փոփոխություններ է մտցնում իր ռազմական դոկտրինայի մեջ՝ հաշվի առնելով Վաշինգտոնում ՆԱՏՕ-ի գագաթաժողովում ընդունված նոր ռազմավարությունը: Պաշտպանության նախարարն իր խիստ մտահոգությունն է հայտնել այն կապակցությամբ, որ ՆԱՏՕ-ն պատրաստ է գործել առանց ՄԱԿ-ի մանդատի եւ Դաշինքի տարածքից դուրս: Սերգեեւն ավելացրել է, որ Մոսկվան լուրջ վտանգ է տեսնում բալթյան երկրների ՆԱՏՕ-ի անդամ դառնալու հնարավորության մեջ:

«ՆԱՏՕ-ի նոր ռազմավարությունը տարածվում է նաեւ Կովկասի վրա»

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ, 27 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. 21-րդ դարի նոր ռազմավարությունը, որ ՆԱՏՕ-ն հռչակեց Վաշինգտոնում եւ որը արգենտինյան մամուլում ստացել է «անարաս պատերազմ» անվանումը, տարածվում է նաեւ Կովկասի վրա: Այս կարծիքին է ամերիկյան փորձագետ Էնդրյու Պիեռը՝ Փարիզի միջազգային պրոբլեմների ատլանտյան ինստիտուտի նախկին տնօրեն, եւ ԱՄՆ Խաղաղության ինստիտուտի անդամ, որի հետ հարցազրույց է տպագրվել արգենտինական «Կլարին» թերթում: Ըստ նրա, ՆԱՏՕ-ն խոստովանել է, որ գործելու է ոչ միայն իր սահմանների շրջանակում, աղահովելով Հյուսիսատլանտյան գոտու անվտանգությունը եւ «պաշտպանելով ընդհանուր շահերը», բայց եւ աշխարհի այլ մասերում, թեեւ նոր համադրության տարածման շրջանները մնում են բանավեճի առարկա:

«Շատ եվրոպացիներ կարծում են, որ ՆԱՏՕ-ն ընդհանուր շահեր ունի Միջերկրական ծովի ամբողջ գոտում, նշել է Պիեռը: Նրանք նաեւ հասկանում են, որ ինչ-որ պահի կարող է ներխուժում կատարվել Պարսից ծոց կամ Կովկաս: Բայց բոլորը չէ, որ համաձայն են Ասիայի առնչությամբ...

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի դերակատարությանը, ապա այստեղ եւս կան տարբեր տեսակետներ: Վաշինգտոնը եւ մի քանի այլ մայրաքաղաքներ ենթադրում են, որ կարելի է գործել առանց ՄԱԿ-ի մանդատի, իսկ, ասենք, Փարիզն ու Բեռլինը ավելի շուտ կողմ են Անվտանգության խորհրդի դերի պահպանմանը... Վեճը դեռ նոր սկսվում է, իսկ Կոսովոյի ճգնաժամը չափազանց բարդացրեց այն»:

Հայկական կոնյակի սվերային շրջանառությունը

«Պեռնո Ռիկարը» եւ եհխորհրդային միջավայրի շուկան

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ. Երեւանի Կոնյակի գործարանային համալիրի արտադրած եւ իրացրած կոնյակների քանակը 98 թ.-ից առ այսօր նվազում է, եւ գործարանի բաժնետոմսերը վարձակալած ֆրանսիական հայտնի «Պեռնո Ռիկար» ընկերությունն այս ամենը պատճառաբանում է հիմնականում երկու գործոնով. ա) Ռուսաստանում տեղի ունեցած ֆինանսատնտեսական ճգնաժամը (այսօր երեքսպեղանի 0,5 լիտրանոց Արարատյան կոնյակի մեծածախ բացթողնման գինը 130 ռուբլի է: Դոլարային համարժեքով գինը չի փոխվել՝ 5,2 դոլար, պարզապես օգոստոսյան ճգնաժամից հետո ՌԴ նվազագույն աշխատավարձը դարձել է 83 ռուբլի), բ) կոնյակի սվերային շրջանառության մեծ ծավալները: Այս երկու գործոններից դյուրին հաղթահարվողը երկրորդն է, եւ պատահական չէ, որ հանրապետության վարչապետը հատուկ որոշումներ է ընդունել պայքարելու Ռուսաստանում ալկոհոլային խմիչքների սվերային վաճառքի դեմ: Օրերս Հայաստան ժամանած ՌԴ հարկերի եւ հարկահավաքման նախարար Գեորգի Բոսսը Արմեն Դարբինյանի հետ համատեղ ծրագիր ներկայացրեց՝ այս ոլորտում երեւանի Կոնյակի գործարանի արտադրանքը պաշտպանելու ուղղությամբ: Գեորգի Բոսսն արձանագրեց. «Ռուսաստանում հայկական կոնյակի սվերային շրջանառությունը, ինչպես նաեւ ընդհանրապես ալկոհոլային խմիչքներինը, բավական նշանակալի է. ես կբերեմ տվյալներ լեգալ շրջանառության մասի վերաբերյալ. 1998 թ. ՌԴ տուկայում լեգալ շրջանառությունը ընդգրկել է 10 ccից 2-ը: 8 տիսն իրացվել է սվերային, իր բաժինն ունի այս ոլորտի ccի մեջ եւ հայկական կոնյակը, որի պիտակի ներքո վաճառվել են տարաբնույթ խմիչքներ», Գեորգի Բոսսը նշեց, որ իրենց առջեւ դրված առաջին բնագիծը 10 սվերային ccից 4–4,5-ը օրինական լեգալ շրջանառություն բերելն է: Տարեվերջին Ռուսաստանը հուսով է 10-ից 8 տիսը դարձնել պաշտպանպես իրացվող. «Մենք դատապարտված ենք այս հարցում հաղթանակի»:

Տես էջ 3

Ուրբ փորձագետներ Քոչարյան-Ալիեւ հանդիպումը զուտ խորհրդանշական են համարում

ԲԱՔՈՒ, 27 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Երկուշաբթի Վաշինգտոնում ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի նախագահների հանդիպում, որի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային համագործակցության հեռանկարները:

Այնուհետեւ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը երեք առ երեք հանդիպել է Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ:

Մի շարք փորձագետների կարծիքով, հանդիպումը խորհրդանշական բնույթ է կրել, սակայն երկխոսության շարունակման փաստն ինքնին չափազանց դրական է գնահատվում գրեթե բոլորի կողմից: Ինչպես հաղորդում են ամերիկյան լրատվամիջոցները, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը Վաշինգտոնում առաջարկել է, որպեսզի նման հանդիպումները տեղի ունենան ՆԱՏՕ-ի շրջանակներում, որը այդպիսով կարող է այլընտրանք լինել ԵԱՀԿ-ին:

Ինչպես հաղորդում է «Ազերպրեսը», դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Ռուսաստանի անհաջողությունների պայմաններում այդ առաջարկությունը պաշտպանել են միայն որոշ փորձագետներ: Սակայն մյուսներն անմիջապես հայտարարել են, որ ներկայումս ԵԱՀԿ Մինսկի խմբին առայժմ այլընտրանք չկա:

Ելցին-Քլինթոն հեռախոսազրույց

ՄՈՍԿՎԱ, 27 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Սթրոբ Թալբոթի մոսկովյան այցի նախօրյակին, ռուսական կողմի նախաձեռնությամբ, տեղի է ունեցել հեռախոսազրույց Ռուսաստանի եւ ԱՄՆ նախագահներ Բորիս Ելցինի եւ Բիլ Քլինթոնի միջեւ: Նախագահները մանրամասն քննարկել են Հարավսլավիայի շուրջ ստեղծված իրադրությունը եւ նրա կարգավորմանն ուղղված հնարավոր քայլերը: Բ. Քլինթոնը դարձյալ կրկնել է այն պահանջները, որոնք առաջադրում են ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն: Դրանք են՝ սերբական ուժերը հանել Կոսովոյից, ալբանացի փախստականների վերադարձ եւ երկրամասում խաղաղության պաշտպանության միջազգային ուժերի տեղաբաշխում:

Ինչպես մամլո ասուլիսում Վաշինգտոնում հայտարարել է ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով Սեմյուել Բերգերը, Ելցինի եւ Քլինթոնի զրույցից հետո ԱՄՆ-ի համար փոքր-ինչ հստակ չէ այն դիրքորոշումը, որ գրավել է Սլոբոդան Միլոշեւիչը: Մոսկվայում Ս. Թալբոթը «կկարողանա պարզել» այդ դիրքորոշումը:

ՄՈՍԿՎԱ

Մոսկվայում նշվեց Հայոց Մեծ եղեռնի տարելիցը

ՄՈՍԿՎԱ, 27 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հայոց Մեծ եղեռնի տարելիցի օրը Մոսկվայի հայ, ինչպես նաեւ այլ համայնքների ներկայացուցիչներն այցելեցին Սուրբ Հարություն հայկական եկեղեցի, որի բակում կառուցված հուշակոթողին ծաղկեպսակներ դրեցին: Պսակներ դրվեցին Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպան Գագիկ Շահբազյանի, ինչպես նաեւ տեղի հայկական համայնքի եւ ՌԴ մայրաքաղաքում գործող հասարակական կազմակերպությունների կողմից:

Արարողությունից հետո տեղի ունեցած հանրահավաքում ելույթ ունեցան հասարակական, գիտության եւ արվեստի գործիչներ: Այնուհետեւ կազմակերպվեց բողոքի ցույց Թուրքիայի դեսպանատան առջեւ:

Երեկոյան Մոսկվայի երկաթուղայիններ մշակույթի պալատում տեղի ունեցավ երեկո՝ նվիրված Մեծ եղեռնի տարեդարձին:

Հայաստանի դեսպանը պարգեւներ հանձնեց նախկին ԽՍՀՄ-ի մի շարք ղեկավարների

ՄՈՍԿՎԱ, 27 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. 1988 թ. Սպիտակի երկրաշարժի 10-րդ տարելիցի կապակցությամբ, երկրաշարժի հետեւանքների վերացմանն ակտիվ մասնակցություն ունենալու համար Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով նախկին ԽՍՀՄ կառավարության մի շարք ղեկավար աշխատողներ պարգեւատրվել են ՀՀ շքանշաններով եւ մեդալներով:

Օրերս Մոսկվայում ՀՀ դեսպանատանը ՀՀ նախագահի հանձնարարությամբ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գագիկ Շահբազյանը պարգեւները հանձնեց Օլեգ Լոբովին, Վիտալի Դոգուժիեւին, Ռեմ Վյախիրեւին, Յուրի Բասալինին, Գեորգի Կուրինին, Վլադիմիր Բեժնեւին եւ այլոց: Պարգեւատրվածները շնորհակալություն հայտնեցին իրենց կատարած աշխատանքների գնահատման համար:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՐԵՍՍ-ՍԵՂԱՆ

ԵՐԵՎԱՆ, 27 ԱՊՐԻԼ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՏԱՊԱՆ-Ապրիլի 27-ին տեղի ունեցավ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նոր կազմի անդրանիկ նիստը, որը վարում էր ԿԸՀ նախորդ կազմի նախագահ Խաչատուր Բեգիրջանը: Նիստին ներկա էին հանձնաժողովի բոլոր 13 անդամները: Օրակարգում ԿԸՀ նախագահի, նախագահի տեղակալի եւ քարտուղարի ընտրության հարցն էր:

Նույնքան միաձայն ԿԸՀ քարտուղար ընտրվեց կառավարության կողմից հանձնաժողովի կազմում առաջադրված Արմենուհի Զոհրաբյանը: Ա. Զոհրաբյանը ծնվել է Երեւանում, Երեւանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի շրջանավարտ է: 1995-96 թթ. եղել է ԿԸՀ անդամ, 1996 թ.-ից մինչ օրս ԿԸՀ քարտուղար: Ինչպես նշեցին ԿԸՀ անդամները, Արմենուհի Զոհրաբյանը փայլուն կատարում է իր աշխատանքը եւ իր գործում անփոխարինելի է: Երբ կատակով առաջարկվեց Ա. Զոհրաբյանի թեկնածությունը քվեարկել նաեւ ներկա բազմաթիվ լրագրողների կողմից, ԿԸՀ քարտուղարի թեկնածությունը կրկին ընդունվեց միաձայն: Դա բացատրվում է նրանով, որ ԿԸՀ աշխատանքը լուսաբանելիս լրագրողները հիմնականում առնչվում են ԿԸՀ քարտուղարի հետ:

Նիստից հետո պատասխանելով լրագրողների հարցերին, նորընտիր նախագահը նշեց, որ ընտրությունները համարում է պետության կայացման կարեւորագույն փուլերից մեկը, եւ ԿԸՀ-ն պետք է ամենայն լրջությամբ եւ նվիրումով նպաստի ազատ եւ արդար ընտրությունների կայացմանը: «Այլապես մեր պետականության համար բարդ իրավիճակ կստեղծվի թե արտաքին, թե ներքին ոլորտներում: Ես կարծում եմ, որ սա նաեւ ազգային անվտանգության հետ կապված խնդիր է, որը պետք է այսօր լուծել մեր ժողովրդի աջակցությամբ»:

ԿԸՀ

Նոր նախագահ ընտրվեց Արտակ Սահրադյանը

10 կողմ, 1 դեմ եւ 2 ձեռնպահ ձայներով ԿԸՀ նոր նախագահ ընտրվեց Արտակ Սահրադյանը, որն առաջադրված է կառավարության կողմից:

Արտակ Սահրադյանը ծնվել է 1945 թ.: Ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, ուր աշխատել է սկզբում որպես ասիստենտ, ապա դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու է: Աշխատել է որպես Գորիսի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, այնուհետեւ գիտության եւ կրթության նախարարության վարչության պետ, 1990-95 թթ. կրթության փոխնախարար: Մինչ ԿԸՀ-ում առաջադրվելն աշխատել է որպես ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի եւ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն: Ինչպես նշեց ԿԸՀ անդամ Վահե Վարանյանը (ԱԺՄ), ինքն այդ թեկնածությանը քվեարկել է դեմ, քանի որ Սահրադյանը ընտրական աշխատանքների կազմակերպման որեւէ փորձ չունի: Չեռնպահ էին Սիլվա Մարկոսյանը («ԱԻՄ+» դաշինք) եւ Արմեն Խոջոյանը («Հայրենիք» դաշինք): Հանձնաժողովի նախագահի պատասխանում առաջադրված երկրորդ թեկնածուն Վանյա Մխիթարյանը (ՀԿԿ), մինչ քվեարկությունը առանց որեւէ բացատրության ինքնաբացարկ հայտնեց:

Միաձայն ԿԸՀ նախագահի տեղակալ ընտրվեց Վանյա Մխիթարյանը (ՀԿԿ): Առաջադրված երկրորդ թեկնածուն ԿԸՀ նախկին փոխնախագահ Ռուբեն Մանուկյանը (ՀՀՇ), մինչ քվեարկությունը ինքնաբացարկ հայտնեց: Վանյա Մխիթարյանը ծնվել է 1947 թ., ԵՊՀ շրջանավարտ է, ֆիզմաթ գիտությունների թեկնածու է, 1973 թ.-ից աշխատում է Երեւանի մանկավարժական ինստիտուտում որպես դոցենտ:

Զոհրաբյանը ծնվել է Երեւանում, Երեւանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի շրջանավարտ է: 1995-96 թթ. եղել է ԿԸՀ անդամ, 1996 թ.-ից մինչ օրս ԿԸՀ քարտուղար: Ինչպես նշեցին ԿԸՀ անդամները, Արմենուհի Զոհրաբյանը փայլուն կատարում է իր աշխատանքը եւ իր գործում անփոխարինելի է: Երբ կատակով առաջարկվեց Ա. Զոհրաբյանի թեկնածությունը քվեարկել նաեւ ներկա բազմաթիվ լրագրողների կողմից, ԿԸՀ քարտուղարի թեկնածությունը կրկին ընդունվեց միաձայն: Դա բացատրվում է նրանով, որ ԿԸՀ աշխատանքը լուսաբանելիս լրագրողները հիմնականում առնչվում են ԿԸՀ քարտուղարի հետ:

Նիստից հետո պատասխանելով լրագրողների հարցերին, նորընտիր նախագահը նշեց, որ ընտրությունները համարում է պետության կայացման կարեւորագույն փուլերից մեկը, եւ ԿԸՀ-ն պետք է ամենայն լրջությամբ եւ նվիրումով նպաստի ազատ եւ արդար ընտրությունների կայացմանը: «Այլապես մեր պետականության համար բարդ իրավիճակ կստեղծվի թե արտաքին, թե ներքին ոլորտներում: Ես կարծում եմ, որ սա նաեւ ազգային անվտանգության հետ կապված խնդիր է, որը պետք է այսօր լուծել մեր ժողովրդի աջակցությամբ»:

«Նոյյան տապանի» թղթակցի այն հարցին, թե մինչ այդ որեւէ առնչություն չունենալով ընտրական գործընթացներին, արդյոք իրեն չի՞ վախեցնում այդ պատասխանի սանձնումը, որն Սահրադյանը պատասխանեց. «Ոչ: Ես հետեւել եմ իմ ողջ էությամբ, որովհետեւ ցանկացած ընտրություն յուրաքանչյուր քաղաքացու էությունն է: Դա պետականության հաստատման իր առաքելությունն է: Կարծում եմ, որ անտարբեր որեւէ մեկը չի եղել: Առավել եւս, որ այս ընտրություններում առկա անտարբերության որոշակի պահերը մեր ժողովուրդը պետք է կարողանա հաղթահարել եւ անպայման իր խոսքն ասել»:

Մեր թղթակցի հաջորդ հարցին, թե արդյոք որն Սահրադյանը ծանո՞թ է ընտրական գործընթացներում տեղ գտած հիմնական խախտումներին եւ ինչպե՞ս է պատրաստվում դրանք կանխել, պատասխանն եղավ. «Ձեր միջոցով, բնականաբար, քանի որ լրատվությունը լայն ոլորտ ունի»:

Արտակ Սահրադյանը կարեւորում է լրագրողների աշխատանքը, համոզված լինելով, որ «միայն ենք հաղթահարելու»: «Հանձնաժողովի աշխատանքը պետք է լինի բացախոսության, հստակ եւ թափանցիկ պայմաններում: Ձեզնից որեւէ գաղտնիք չի լինելու», լրագրողներին վստահեցրեց ԿԸՀ նոր նախագահը: Նա համոզված է, որ «ինչքան էլ սուր եզրեր լինեն, լրատվությունը միայն օգնում է աշխատանքին»:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ռոբերտ Քոչարյան. «Մինսկի խմբի վերջին ծրագիրը տահավետ է Ադրբեջանի համար»

ՀՀ նախագահի հարցազրույցը «Թուրան» գործակալության

Սկիզբը էջ 1

Պատասխանելով Հայաստան ռուսական սպառազինության մատակարարումներին առնչվող հարցին՝ Քոչարյանն ասել է, որ ողջ այդ սպառազինությունը մուտք է գործում ռուսական ռազմակայաններ: «Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում մենք ռուսական բազաների կարիքը չունենք: Հայաստանում ռուսական բազաների առկայության պատճառն առնչվում է հայ-թուրքական հարաբերություններին: Մենք մտահոգված ենք Թուրքիայի հետ կապված անվտանգության հարցերով, այդ պատճառով Հայաստանում ռուսական ռազմակայաններ են գտնվում», ասել է Քոչարյանը: Նա նշել է, որ Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել առանց որեւէ նախապայմանի: Սակայն Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման հարցը կախվածության մեջ է դնում Ադրբեջանի հետ մեր հարաբերությունների բարելավումից: Քոչարյանն ընդգծել է, որ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ ոչ մի տարածքային հավակնություն չունի: «Մեր որոշ քաղաքացիներ կարող են այդ մասին խոսել, սակայն դա Հայաստանի պետական քաղաքականությունը չէ», ասել է Քոչարյանը:

Իր ելույթի ավարտից հետո Ռոբերտ Քոչարյանը հարցազրույց է ունեցել «Թուրան» գործակալության վաշինգտոնյան թղթակցի հետ:

– Ադրբեջանը հրաժարվեց ընդունել Մինսկի խմբի վերջին ծրագիրը՝ դրանով իսկ մերժելով ընդհանուր պետության գաղափարը: Դուք այդ ծրագիրն ընդունեցիք: Կողմերի դիրքորոշումները տարբեր են. այդ առնչությամբ արդյոք Դուք Մինսկի խմբից նոր ծրագի՞ր եք ակնկալում:

– Ես Ալիեւին եւ համանախագահներին անկեղծորեն ասել եմ, որ դա այն եզրն է, որից այն կողմ մենք չենք անցնի: Հայաստանի եւ Ղարաբաղի դիրքորոշումը երբեմն անգամ էապես փոխվել է: Ադրբեջանի դիրքորոշումը ինչպես մնում էր «խորհրդային» ինքնավարության սահմաններում, այդպես էլ մինչ այժմ պահպանվել է:

– Բայց չէ՞ որ Դուք էլ հրաժարվեցիք այն ծրագրից, որը ժամանակին ընդունել էր Տեր-Պետրոսյանը:

– Այդ ծրագիրը հենց «խորհրդային» ինքնավարության ծրագիրն էր: Այն ոչնչով չէր տարբերվում եղածից: Դե ֆակտո Ղարաբաղը լիովին անկախ է: Վերջին հաշվով, այդ ինքնավարությունը մեզ ընդհանրապես պետք չէ:

– Այսինքն, հակամարտության չլուծված լինելը Ձեզ սկզբունքորեն ձե՞ռ է տալիս:

– Հարցն այդ չէ: Հենց այն հանգամանքը, որ մենք համաձայնել ենք այս բանակցություններին, խոսում է այն մասին, որ այսօրվա իրավիճակը մեզ չի բավարարում: Եվ երաշխավորված հեռանկար ունենալու համար երկու ժողովուրդներն էլ պետք է որոշում կայացնեն:

– Ասել է թե Դուք զիջումների չե՞ք գնա:

– Մենք այլեւս զիջելու բան չունենք: Առկա է դե ֆակտո ստեղծված պատկեր: Մինսկի խմբի վերջին ծրագիրը նախատեսում է, որ մենք հետեւողականորեն կհրաժարվենք առկա իրավիճակից՝ քայլ առ քայլ Ադրբեջանին ինչ-որ տարրեր զիջելով: Այսինքն, այդ ծրագրի իրականացման ընթացքում ես մշտապես գլխացավանք եմ ունենալու, իսկ Ալիեւը դա իր ժողովրդին հետեւյալ կերպ կներկայացնի. ահա ես վերադարձրեցի այս շրջանը, երկրորդ շրջանը եւ այսպես շարունակ: Ինձ դա հարկավոր չէ: Ես պետք է որ հրաժարվեի այդ ծրագրից: Իրավիճակը կարծես հակառակն է ստացվում: Այսպես. այն կողմը, որը մշտապես պետք է գլխացավանք ունենա, համաձայնում է, իսկ մյուս կողմը, որը կարող է փաստակված կերպով այդ ծրագիրը ներկայացնել որպես դրական ձեռքբերում, հրաժարվում է դրանից:

– Դա նշանակո՞ւմ է, որ այս բոլոր հանդիպումները ձեւական բնույթ են կրում:

– Ես դա ձեւական չեմ համարում: Շփման փաստն իսկ թույլ է տալիս միմյանց ավելի լավ հասկանալ: Ես, օրինակ, Ալիեւի հետ մի քանի հանդիպումներից հետո, զգում եմ, որ անհամեմատ լավ եմ հասկանում նրա գործողությունների շարժառիթները: Կարծում եմ, որ նա էլ իմ շարժառիթները կհասկանա: Դա չի նշանակում, որ մենք ընդհանուր լուծման են հանգել: Բայց դա արդեն շատ ավելի լավ է, քան պարզապես չպատկերացնել, թե մենք ինչ ենք մտածում այս կամ այն հարցի շուրջ:

Պարզվում է՝ Հայաստանի Կորեյկոն Գառնիկ Իսագուլյանն է

Գառնիկ Իսագուլյանը երեկ լրագրողների հետ հանդիպում էր նախաձեռնել թիվ 29 ընտրատարածքում իրեն պատգամավորության թեկնածու չգրանցելու պատճառով: Իսագուլյանը տեղեկացրեց, որ իր ձեռքում են բոլոր փաստաթղթերը, որոնք թեկնածությունը չգրանցելու հիմք են հանդիսացել: Ըստ Իսագուլյանի, 29-րդ ընտրատարածքում առաջադրվել են 18 ներկայացուցիչներ, այդ թվում կան քաղաքական ակտիվ կուսակցությունների թեկնածուներ, եւ նա պատրաստվում էր մտնել ազատ ընտրատարածքի մեջ, սակայն առաջադրման փաստաթղթերը ներկայացնելուց հետո սկսվել են տարբեր կարգի ճնշումներ: Իբր թե Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ (Իսագուլյանը ասաց, որ փաստի հստակ հիմնավորումը չկա) Դավիթ Զադոյանը, Արարատի մարզպետը «Սուկ» մականունով, փոխմարզպետը եւ ՆԳ տարածքային վարչության պետը որոշել են ամեն ինչ անել, որպեսզի Իսագուլյանը չանցնի: Եվ քաղաքական, գյուղական միջոցով փորձել են ճնշել իրական պատկերը: Սակայն Իսագուլյանը հավաստեց, թե միանգամայն բոլորը համոզմունք են հայտնում, որ 29-րդ ընտրատարածքում Իսագուլյանն է հաղթելու: Դրանից հետո Իսագուլյանի հետ կրկին տարվել են բանակցություններ, սակայն ինքը հայտարարել է, որ որեւէ խմբակցության հետ քարոզարշավ չի տանելու, որից հետո փոխմարզպետը իբր թե Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ այդ ընտրատարածքում սկսել է տարբեր կարգի աշխատանք: Այս ամենը հաշվի առնելով Իսագուլյանը հասկացել է, որ իր գրանցումը լուրջ դժվարություններ կարող է առաջացնել, եւ փաստաթղթերի նկատմամբ հետեւողական է եղել: Սակայն ինքնության է դրվել այն հանգամանքը, որ երեք տարի Գառնիկ Իսագուլյանը փախուստի մեջ է եղել: Մինչդեռ, հավաստեց նա, ՆԳՆ-ից ստացել է փաստաթուղթ, որը հաստատում է իր հանրապետությունում գտնվելու փաստը:

Սակայն փոխմարզպետը Դավիթ Զադոյանի հանձնարարությամբ եւ իբր Վազգեն Սարգսյանի գիտությամբ հանձնարարել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի վարչության «Մասիս» ՊՓԲԸ գործադիր տնօրեն Սամվել Հարությունյանին քրքել Իսագուլյանի գործերը: Պարզվել է, որ անցյալ տարի Իսագուլյանի կինը վաճառել է երեւանյանոց բնակարանը: Իսագուլյանը փաստը չհերքեց, հավելելով, որ նույն օրը գնել է ուրիշ բնակարան, եւ կան փաստաթղթերը: Մինչդեռ նշվում է, որ տունը վաճառելով եկամուտ է ստացել եւ չի հայտարարագրել, այն դեպքում, երբ տուն վաճառելը եկամուտ չի ենթադրում: Պարզվել է նաեւ, որ 91 թ.-ից Իսագուլյանի անունից հաշվառված է 3000 քմ հող անհայտ տեղում: Իսագուլյանը պատասխանեց հայտարարեց որեւէ ժամանակ սեփականության վկայագիր հողի համար չի ստացել, իսկ իր անվան դիմաց որված ստորագրությունն ակնհայտ կեղծիք է: Նա ընդգծեց, որ այդ քուղթը «Միասնության» դաշինքի թեկնածուն ներկայացրել է Արարատի մարզային ընտրական հանձնաժողով, որի հիման վրա էլ մերժվել է իր թեկնածության գրանցումը: Մինչդեռ օրենքի 108-րդ հոդվածը հստակ սահմանում է գրանցման համար ներկայացվող փաստաթղթերը: Զուգահեռ վկայաբերելով օրենքի 106-րդ հոդվածը, Իսագուլյանը հիշեցրեց, որ հայտարարագիրն անհրաժեշտ էր առաջադրման համար, ոչ թե գրանցման. «Եթե իմ հայտարարագիրը ծայրից ծայր կեղծ լիներ, դարձյալ չգրանցելու հիմք չէր կարող հանդիսանալ», ընդգծեց Իսագուլյանը: «Գաղտնիք չէ, որ Իսագուլյանը եկամուտներ չունի, ամբողջ շրջանը գիտի, թե տունն ինչու է ծախել: Շատ լավ գիտեն, որ Իսագուլյանը երբեք հող չի մշակել: Հարցը հստակ էր դրված Իսագուլյանը չպետք է անցնի», հայտարարեց օրվա հյուրը հավելելով, որ եթե 30 տոկոսով ընտրություններն արդար անցնեին, ապա ինքն անցնելու էր:

Այսօր Մասիսի դատարանում խնդրի վերաբերյալ կկայանա դատավարություն: Գառնիկ Իսագուլյանի դատապաշտպանը ՀՅԴ համամասնական ցուցակով առաջադրված Ռուբեն Սահակյանն է: Իսագուլյանը, կարեւորելով լրագրողների մասնակցությունը, հույս հայտնեց, որ միայն լրագրողները կարող են ազդել ճշմարտությունը բացահայտելուն եւ մտահոգություն հայտնեց, որ դատավոր Պողոսյանն Արտաշատից է, ճիշտ դատավճիռ կայացնելու դեպքում դժվար է ասել կենդանի կմնա՞, թե՞ ոչ: «Պարզվում է, որ Հայաստանի Կորեյկոն Գառնիկ Իսագուլյանն է, եկամուտները թաքցնում է պետությունից: Կարեն Դեմիրճյանն ու Վազգեն Սարգսյանը եթե այս կարգով են ուզում արդար ընտրություններում հաղթել, ապա իրենց հաղթանակն ապահովված է», հայտարարեց Գառնիկ Իսագուլյանը:

ԱՐԱՐԱՏ ՍԱՖԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊՍՈՅԻՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային տարումը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Լրատվամիջոցները Երեւանի մամուլի ակումբի հայելում

Երեւանի մամուլի ակումբը երեկ ժուռնալիստի տանը հրաւիրակեց հայկական լրատվամիջոցների վերաբերյալ իր դիտարկումները 1998 թ. մայիսի 1-դեկտեմբերի 31 եւ 1999 թ. հունվարի 1-փետրվարի 28 ժամանակահատվածներում: Բուն նյութին անցնելուց առաջ, սակայն, ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը տեղեկացրեց «Ազգային հեռուստատեսություն» ՓԲԸ-ում կառավարության լիազոր ներկայացուցչի պարտականություններից հրաժարվելու իր որոշումը, որ դեռեւս ապրիլի 12-ին հղել է ՀՀ վարչապետին, սակայն առ այսօր պատասխան չի ստացել: Լիազոր ներկայացուցիչների ինստիտուտը, որի իրավասություններում ՓԲԸ ֆինանսատնտեսական գործունեության, գործադիր տնօրենի, հաշվապահի հաստատումն է եւ ծրագրային քաղաքականության մշակումը, նրա կարծիքով, ձեւական բնույթ է կրում եւ, ըստ էության, չի գործում: Մինչեւ հիմա խորհուրդը մի անգամ է հավաքվել եւ հաստատել գործադիր տնօրենին, ԱՀ-ի անաչառության, քաղաքական ուղղվածության եւ հաղորդումների որակի վրա ներգործելու լծակ չունի, ուստի պրն Նավասարդյանն անիմաստ է համարում խորհրդանշական մասնակցությունն այդ մարմնին, թեպետ ոչինչ չունի ոչ Տիգրան Նաղդալյանի անձի եւ պրոֆեսիոնալիզմի, ոչ էլ նրա ղեկավարած հաստատության դեմ:

Ըստ 1998 թ. մայիս-դեկտեմբեր ամիսների դիտարկումների, առաջատար լրատվամիջոցները բաժանվել են «ավանդականի» եւ «ոչ ավանդականի»: Ավանդական (միջազգային կյանքը, տնտեսությունը, ներքին քաղաքականությունը եւ մշակույթը համաչափորեն լուսաբանող) լրատվամիջոցներ են ճանաչվել «Հայաստանի Հանրապետությունը», «Ռեսպուբլիկա Արմենիան», «Ազգը», «Երկիրը» եւ «Առավոտը»: Մյուսները գերապատվություն են տվել առանձին թեմաների: Ըստ այդմ ընկած քաղաքական գործիչների նկատմամբ վերաբերմունքի, հայրենի լրատվամիջոցների համակրությունները բաշխվել են հետեւյալ կերպ: Հիշատակումների թվի եւ տրամադրված բերբային ծավալի կամ եթերաժամերի առումով ներկա իշխանություններին (խորհրդանշաբար Ռոբերտ Քոչարյան, Վազգեն Սարգսյան, Սերժ Սարգսյան) անվերապահորեն պաշտպանում են «ՀՀ», «ՌԱ» օրաթերթերը, Ազգային հեռուստատեսությունը եւ Ազգային ռադիոն: Երեքն էլ նախկին իշխանությունների (Լեւոն Տեր-Պետրոսյան եւ Վանո Սիրադեղյան) համեմատ նախընտրել են «կարոտախտի» ալիքի վրա գտնվող գործիչներին (Կարեն Դեմիրճյան եւ Սերգեյ Բաղդասարյան): Կուսակցական համակրություններ ունեցող լրատվամիջոցներից «Ազգը», «Հայոց աշխարհը» եւ «Երկիրը» նույնպես գերադասել են ներկա իշխանություններին, ընդ որում «Ազգը» նախորդ իշխանությունների եւ «կարոտախտայինների» նկատմամբ գրեթե նույն վերաբերմունքն ունի, մինչդեռ «Երկիրը» ու «Հայոց աշխարհը» նախկինների նկատմամբ ընդգծված բացասական, «կարոտախտայինների» նկատմամբ չեզոք վերաբերմունք ունեն:

Ընդդիմադիր լրատվամիջոցներ են համարվել «Գոլոս Արմենիին», «Հայրը» եւ «Այժմը», որոնց միավորում է ներկա իշխանությունների նկատմամբ մերժողական վերաբերմունքը: «Հայրը», բնականաբար, պաշտպանում է նախկին իշխանություններին, «Այժմը» եւ «ԳԱ»-ն նախորդներին ինքնադատում ավելի, քան ներկաներին: «Ա1+»-ը, դասելով «Այբ-Թե» լրատվական ծրագրից, չեզոք է, «Հեռագրություն» եւ «Կիրակի» հաղորդումներից դասելով խիստ ընդդիմադիր:

1999 թ. առաջին երկու ամիսներին առջեւում առաջվա պես Ռոբերտ Քոչարյանն է, որի անունը կրկնակի է հիշատակվել, քան բացասական հիշատակումների «չեմպիոն», հիշատակումների թվով երկրորդ տեղում գտնվող Վանո Սիրադեղյանինը: Սիրադեղյանի «գործից» հետո ՀՀՇ նախագահի նկատմամբ ուշադրությունը կրկնակի մեծացել է հիշատակումների թվով նա առաջ է անցել ավանդաբար երկրորդ տեղում գտնվող վարչապետից: ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն առաջին անգամ հայտնվել է չորրորդ պատվավոր տեղում, հաճախ է հիշատակվել Տեր-Պետրոսյանը տեղափոխվելով հինգերորդ հորիզոնական:

Անվերապահորեն կամ հիմնականում Սիրադեղյանին դասապարտել են «ԳԱ»-ն, «Երկիրը», «Հայոց աշխարհը», «Ազգը», «ՌԱ»-ն, «Նովոյե վրեմյան» եւ «Իրավունքը», պաշտպանել՝ «Հայրը», «Առավոտը» եւ «Օրագիրը» (վերջին երկուսում հիշատակումների բացասական հաշվեկիռը պահպանվել է): Բարձրացել է Սերժ Սարգսյանի եւ Վազգեն Սարգսյանի նկատմամբ հետաքրքրությունը. «Հանրապետականի» համագումարում հայտնի ելույթից հետո Վազգեն Սարգսյանը հայտնվել է վեցերորդ, Սերժ Սարգսյանը ութերորդ տեղերում:

Վերջում ավելացնենք, որ մեզ անհեթեթ է թվում դիտարկման «սանտիմետրային» այն ձեւը, որը կիրառվում է Երեւանի մամուլի ակումբի կողմից:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Հովհ. Չեքիջյանն արժանացավ Մոնտրոյի միջազգային փառատոնի Prix du Public-ին

Ապրիլի 7-ին Մոնտրոյի (Շվեյցարիա) «Ստրավինսկի» դահլիճում տեղի ունեցավ երգչախմբային արվեստի միջազգային 35-րդ փառատոնը, որին մասնակցում էր նաեւ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Կրճատված՝ 85 հոգիանոց կազմով երգչախումբն արժանացավ Պրի դը Փուբլիկ՝ հասարակության շնորհած մրցանակին: Հանդիսականները դահլիճի մուտքի մոտ ստանում էին հատուկ թերթիկներ, որոնց մեջ 1-10 աստիճանակարգով իրենց գնահատականն էին տալիս ելույթ ունեցող երգչախմբերին: 2000 հանդիսականների մեծամասնությունը փառատոնին մասնակցող 14 երկրներից ժամանած 20 երգչախմբերից նախընտրել էր հայկականը: Ամբողջ դահլիճը հոտնկայս ծափահարություններով էր դիմավորել Հովհ. Չեքիջյանի ղեկավարությամբ հայկական կատելայի հնչեցրած 6 գործերը՝ Կոմիտասի, Վերդիի, Գերշվինի, Գունոյի, Ռոսինիի ստեղծագործությունները: Փառատոնին մասնակցում էին նաեւ երգչախմբեր Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից եւ Էստոնիայից:

Լուիզ Մանուկյան Սիմոնը Արցախում

Ապրիլի 25-ին կարճատեւ այցով Արցախում էր ՀԲԸՄ նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնը: Նրան ընկերակցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ, կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը եւ ՀԲԸՄ հայաստանյան գրասենյակի տնօրեն Ա-ննս Ղազարյանը: Հյուրերը եղան «Յուրիտեր» ՓԲԸ հացաթխման, մակարոնեղենի եւ երշիկի արտադրամասերում, ծանոթացան նոր կառուցվող ծերանոցի, մայրաքաղաքի շինարարական մյուս օբյեկտների աշխատանքների ընթացքին:

Ալեք Մանուկյանի անվան փողոցում տեղադրված հայ մեծ բարեգործի բրոնզե հուշարձանին նրանք ծաղիկներ դրեցին: Հյուրերը եղան նաեւ ԼՂՀ բանակի զորամասերից մեկում: Այցելությունը Ստեփանակերտի օդանավակայան նպատակ ուներ տեղեկանալու օդանավակայանի ուղեւորատարողունակման նոր հնարավորություններին: Այցելությունների ընթացքում նրանց ուղեկցում էին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, վարչապետ Ժիրայր Պողոսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, կառավարության անդամներ:

Նույն օրը հյուրերին իր նստավայրում ընդունեց Արկադի Ղուկասյանը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ԼՈՌԻ

Պատգամավորության որոշ թեկնածուներ իրենց են վերագրում ուրիշների արած գործը

Ապրիլի 26-ին տեղի ունեցավ Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանի մամուլի ասուլիսը, որին մասնակցում էին տեղական եւ հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Սկզբում մարզպետը ներկայացրեց մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ անդրադառնալով արդյունաբերությանը, քաղաքաշինությանը, գյուղատնտեսությանը, մշակույթին եւ այլն:

Լրագրողների հարցերը բազմաբնույթ էին: Մարզպետը սպառիչ պատասխաններ տվեց: Լուրջ երկխոսություն ծավալվեց ԱԺ առաջիկա ընտրությունների շուրջ: Մարզպետը կոչ արեց, որ պատգամավորության թեկնածուները հնարավորին չափ զուսպ լինեն, խուսափեն իրենց մրցակիցներին վարկաբեկելու միջոցով միավորներ շահելու գայթակղությունից: Նա հայտնեց, որ դեմ չէ անաչառ քննադատությանը, սակայն անպատասխան չի մնա իշխանությունների հասցեին ասված որեւէ զրպարտանք: Հենրիկ Քոչինյանը հատկապես ուշադրություն հրավիրեց վերջերս կրկնվող այն երեւույթի վրա, որ ներկայիս ԱԺ որոշ պատգամավորներ նորից ընտրվելու հույսով իրենց են վերագրում ուրիշների, մասնավորապես տեղական ինքնակառավարման մարմինների կատարած աշխատանքը: Մարզպետի կարծիքով, ընտրություններին չմասնակցողները կնպաստեն միայն անարժանների ընտրվելուն: Ճիշտը մասնակցելն ու արժանավորին ընտրելն է:

– Առաջին Գերագույն խորհուրդն արդյունավետ էր աշխատում. ներկայիս ԱԺ-ն մի փոքր խեղաթյուրվեց կուզեի, որ նորընտիր ԱԺ-ն ավելի պրոֆեսիոնալ լիներ, ասաց նա:

ՄԱՐՍԵԼ ՄԵՍՈՒՆՈՒՆ
Վանաձոր

Հայկական կոնյակի սվերային շրջանառությունը

Սկիզբը էջ 1

Հայագիտ դրսից

Համաշխարհային բանկի պատասխանատու Լեւ Ֆրեյնկմանը, որին վերապահված է Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնտեսության կառավարման ու աղքատության վերացման ոլորտը, փորձ-ինչ այլ տեսակետ ունի Կոնյակի գործարանի առջեւ ծագած դժվարությունների վերաբերյալ: Որպես վերլուծաբան՝ անդրադառնալով «Պեռնո Ռիկարի» հետ կնքած Երեւանի Կոնյակի գործարանային համալիրի 100 տոկոս բաժնետոմսերի վաճառքի գործարքին, նա մեկնաբանեց. «Ինչո՞ւ Ռուսաստանում ընկավ կոնյակի սպառումը՝ հանգեցնելով Կոնյակի գործարանի տնտեսական ցուցանիշների անկման: Ես կողմնակից չեմ ամեն ինչ հանդուրժելու, բայց մինչ արմատական որոշում ընդունելը ես կառաջարկեի եւս մեկ անգամ գտնել փոխզիջում: Կա երկու տեսակետ: Առաջինը՝ Ռուսաստանում ճգնաժամ է, եւ ռուսները չունեն փող կոնյակ գնելու: Բայց սա միջ հավանական է, քանի որ կոնյակի պահանջարկի տատանումը զրոյական է: Կոնյակը միշտ եղել է թանկարժեք հաճույք, որ մատչելի է հարուստներին, իսկ նրանք հարուստ էլ մնացել են: Ինձ առավել մոտ է Հայաստանի կառավարության որոշ անձանց տեսակետը, ըստ որի՝ Երեւանի Կոնյակի գործարանի նոր տերերը չեն կարողանում վաճառք կազմակերպել Ռուսաստանում: Իրենց՝ իբրեւ եվրոպացիների, պետք է պայմանագիր, բանկային հաշիվ, բանկային երաշխիքներ... Բայց Ռուսաստանում կոնյակի հետ այդպես չի արվում, եւ նրանք չեն կարողանում աշխատել, այսինքն՝ չեն կարողանում վաճառել: Ես ուզում եմ հավատալ այս տեսությանը: Տվյալ հարցում անհրաժեշտ է օգնել նոր տիրոջը (իմա «Պեռնո Ռիկարին»-ն. Դ.) ստեղծել հայկական դիստրիբյուտորական բաշխիչ ընկերություն, որը կգնի նրանցից կոնյակը եւ կվաճառի Ռուսաստանում այնպես, ինչպես սովոր էին դա կատարել: Ասում են, որ հին տնօրենը գիտե, ինչպես դա անել (հին տնօրենն Արմավիրի ներկայիս մարզպետ Ալբերտ Հերոյանն է-Ն. Դ.): Նրան եւս պետք է ներգրավել: Հայկական կոնյակը միշտ էլ գնել է հասարակության լուսավորյալ եւ էլիտար մասը: Ես մի քանի տարի է՝ ապրում եմ Վաշինգտոնում, ուր չես գտնի հայկական կոնյակ եւ ստիպված եմք խմել (ԸԲՔԵԼ) ֆրանսիական կոնյակը», եզրափակեց Լեւ Ֆրեյնկմանը:

Վահան Փափազյանը «Պեռնո Ռիկարի» ներկայացուցիչ ԱՊՀ-ո՞ւմ

Մինչ Հայաստանի կառավարության որոշ դեմքեր եւ միջազգային փորձագետներ «Պեռնո Ռիկարին» առաջարկում են կոնյակի իրացումը կազմակերպելու համար դիստրիբյուտորական հայկական ընկերություն հիմնել, **«Ազգին»** հայտնի դարձավ, որ ՀՀ նախկին արտգործնախարար եւ Ֆրանսիայում նախկին դեսպան Վահան Փափազյանը նշանակվել է «Պեռնո Ռիկարի» ներկայացուցիչ եւ իրացման ծրագրավորող ԱՊՀ-ում: Այս նշանակումը Հրանտ Բագրատյանից հետո թույլ է տալիս եզրակացնել, որ «Պեռնո Ռիկարի» կապերը հայաստանյան իշխանության հետ բավական հին են եւ վերաբերում են մինչիշխանափոխության շրջանին:

Միանշանակ է, որ «Պեռնո Ռիկարը» պետք է վերանայի հայկական կոնյակի իրացման շուկաներում ոչ միայն մարտավարությունը, այլեւ ռազմավարությունը: Ռուսական շուկայում «Պեռնո Ռիկարը» չհաջողեց, եւ դա բնական է: Ռուսաստանյան կապերը եւ Ռուսաստանի հետ առեւտուր անելու հմտություն ֆրանսիացուն դժվար է միանգամից ձեռք բերել. «Խելքով Ռուսաստանը չես ըմբռնի», պտղում էր անգամ ռուս հայտնի բանաստեղծը: Ինչ վերաբերում է նոր շուկաներին, որոնցից ամենահեռանկարային կարող է համարվել Ամերիկան, ուր կան ոչ միայն հայկական, այլեւ ԱՊՀ տարբեր երկրների գաղթօջախներ (ԱՊՀ երկրները նախկին խորհրդային միութենական հանրապետություններն են, որտեղ կոնյակ օգտագործելու ավանդույթը բավական արմատացած էր), արդեն «Պեռնո Ռիկարը» դարձյալ կարող է դիմել հայկական այս անգամ սփյուռքյան կառույցներին: Հիշեցնենք «Նոյակի» փորձը, որը բավական հաջողությամբ իրացրեց հայկական կոնյակը: բայց հետո ինչ-ինչ պատճառներով արժանացավ հալածանքների: Արեւելքը նուրբ գործ է անգամ ֆրանսիացիների պես նրբաճաշակ գործարարների համար առավել եւս հայկական կոնյակի պարագայում, եւ չարժե թերագնահատել հայ իրացնողների փորձը:

digitised by A.R.A.R.@

քաղաքական

«Բաժանիր, որ տիրես»-ը, որ շատերի համար աննկատելի սողոսկեց մեր երկիր՝ ծվատելու 1988-ի աննախադեպ վերելքն ու միասնությունը, այժմ Հայաստանը հակամարտող «քաղաքական մելիքությունների» տրոհելուն զուգահեռ անցել է Արցախը եւ Հայաստանը տարանջատելուն: 1998 թ.-ի նախագահական ընտրություններից առաջ տեղի ունեցավ անհավատալին. «Միացո՞ւմ» եւ «Պայքա՞ր, պայքա՞ր մինչեւ վերջ» կարգախոսներով Անկախության հրապարակի հարթակից ցաղ գործիչներ Հրանտ Խաչատրյան, Արտաշես Գեղամյան, որոնց ներկայությունն ապագա խորհրդարանում նույնիսկ տեղին կլիներ, որքան, ասենք, Լյուդմիլա Հարությունյանի, Ռուբեն Միրզախանյանի, Վահան Հովհաննիսյանի, Աղվան Վարդանյանի, Նարինե Դիլբարյանի... Եթե ոչ նրանց, ապա ո՞ւմ են ուզում մայիսի 30-ին ծեւավորվելիք խորհրդարանում տեսնել այն մարդիկ, ովքեր այսօր «սարսափած են» քաղաքային հեղինակություններ եւ մականունավոր անձանց խորհրդարանում հանգրվանելու ընթանում:

Ինչ վերաբերում է հերթական ընտրություններից առաջ հերթական անգամ բորբոքվող ղարաբաղցի-հայաստանցի «հակամարտությանը», ապա «Հայաստանը պետք է հայաստանցիները ղեկավարեն» եւ «Ղարաբաղն ինքնուրույն պետություն է» շինծու կարգախոսներով պտտվող այդ մեղեդին արդեն ծանծրալի է դառնում: Ի՞նչ անկախ պետականության մասին է խոսքը, երբ ԼՂՀ բյուջեի առյուծի բաժինը ՀՀ բյուջետային մուտքերի հաշվին է գոյանում, երբ աշխարհի ոչ մի երկիր, նույնիսկ Հայաստանը, չի ճանաչել այդ անկախությունը: Աղմկել, թե արցախցիներն օտարերկրացիներ են, նշանակում է Արցախը ներկայացնել իբրեւ մի «սեւ խոռոչ», որի բնակիչները եւ կան, եւ չկան (ասելով ԼՂՀ-ն միջազգային հանրության համար առնվազն գոյություն չունի) կամ նրանց պարզապես հարեւան երկրի Ադրբեջանի քաղաքացիներ հռչակել, ընդառաջ գնալով ադրբեջանական կողմին:

ԼՂՀ պաշտպանության նախարարն ինքը արցախցու ուղղամտությամբ արդեն իսկ բացատրել է Հայաստանի ընտրություններով հետաքրքրվելու իր «շահը». Արցախի գոյատեւման երաշխիքը Հայաստանն է, եւ Հայաստանում տեղի ունեցող որեւէ գործընթաց, առավել եւս առաջիկա չորս տարվա քաղաքական կլիման կանխորոշելու կոչված խորհրդարանական ընտրությունները չեն կարող անտարբեր թողնել արցախցիներին, եւ իրավացի էր նույն Հրանտ Խաչատրյանը, երբ պահանջում էր, հավատարիմ մնալով ՀՀ հռչակագրին, նրանց մասնակից դարձնել ՀՀ օրենսդիր մարմնի ընտրություններին:

Որեւէ մեկի համար, կարծում եմ, գաղտնիք չէ, որ ընտրապայքարում ներգրավված կուսակցությունների ընտրարշավը «թքու թան չէ, կուսակցական անդամավճարների բան չէ»: Յուրաքանչյուրին, այո, ինչ-որ (հաճախ արտաքին) կառույցներ կամ անհայտ (հաճախ ոչ հայ) բարեգործներ հովանավորում են: Այդ առիթով հուզվելու, առավել եւս նեղտնելու անհրաժեշտություն, կարծում եմ, չկա. այդպիսին է առայժմ բազմազգ կուսակցությունների երկիր Հայաստանս: Ինչ վերաբերում է արտալու» մտայնությանը տուրք են տալիս նաեւ «Միասնություն» միավորման որոշ գործիչներ ուժեղին ոչ այնքան հարիր (ճիշտ է, զուսպ) անհանգստություն դրսեւորելով «արցախյան միջամտության» նկատմամբ: Ոչ պակաս անհասկանալի է, երբ արցախցի ղեկավար այրերն անգգույշ հայտարարություններով իրենք են ջուր լցնում ՀՀ նախագահի դիրքերը հետեւողականորեն սասանել փորձող նորաթուխ ընդդիմադիրների ջրաղացին: Սամվել Բաբայանն, օրինակ, հայտարարում է, թե «երբեք չի սատարել եւ չի

ՏԵՍԱԿԵՏ

«Բաժանիր, որ տիրես»-ի խորհրդարանական վերելքը հերթական ընտրություններից առաջ

իշխանական «վերնատուն» տեղափոխված տարբեր մակարդակի գործիչներն իշխող դարձած կուսակցությունը տարբեր ժամանակներում լված քաղաքական այրերն Արցախն օտար երկիր, Արցախի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկի Ռոբերտ Քոչարյանի թեկնածության առաջադրումն օրինազանցություն որակեցին եւ այսօր էլ շարունակում են թմբկահարել այդ անհեթեթ վարկածը:

Ի դեմս նախագահ Քոչարյանի եւ ՆԳ, ԱԱ նախարար Սերժ Սարգսյանի հայությանն սպառնացող խոշորագույն վտանգը հայտնագործած գործիչները, որ լծվել են Հայաստանն Արցախի «գերիշխանությունից» ազատելու սայլին, այդ գործում «արհեստավարժվելու» նոր հնարավորություն են ստացել խորհրդարանական ընտրություններից առաջ. ԼՂՀ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանի աջակցությունը «Իրավունք եւ միաբանություն» դաշինքին: Նախընտրական միավորում, որ գլխավորում են հանրությանը ծանոթ, քաղաքականապես մարակենհեռանկարից: Կարիք կա՞ սրեր ծոցել, երբ ՀՀ վարչապետը, ենթադրենք, փորձում է նպաստել Հայաստանի հայտնի կին գործիչներից մեկի՝ տկն Հարությունյանի, իսկ արցախցի գեներալը՝ Արցախի եւ Հայաստանի վերամիավորմանը նախանձախնդիր քաղաքական գործիչների մուտքին խորհրդարան: Լոբբիինգը, անգամ դրսից այլ երկրների ընտրություններում անծանոթ հասկացություն չէ մեր օրերում: Արժե՞ զանգակներ հնչեցնել Հայաստանի «ներքին գործերին» ԼՂՀ պաշտպանության նախարարի «միջամտության» առթիվ, եթե այդ միջամտությունից պակասելու է խորհրդարանում անելիք չունեցող պատգամավորների թիվը: «Ազատի, արդարի» մտահոգությունն է պատճառը: Եթե այո, ապա կրկնության կարգով ստիպված եմ արձանագրել, որ սոված երկրում բացարձակ ազատ եւ բացարձակ արդար ընտրությունները Ֆանտաստիկայի բնագավառից են, եւ գոհունակություն հայտնել, որ ընտրությունների վրա ազդելու լծակներ ունեցողների «լոբբիինգը» գոնե ճիշտ հունով է ընթանում:

Ինչ վերաբերում է հերթական ընտրություններից առաջ հերթական անգամ բորբոքվող ղարաբաղցի-հայաստանցի «հակամարտությանը», ապա «Հայաստանը պետք է հայաստանցիները ղեկավարեն» եւ «Ղարաբաղն ինքնուրույն պետություն է» շինծու կարգախոսներով պտտվող այդ մեղեդին արդեն ծանծրալի է դառնում: Ի՞նչ անկախ պետականության մասին է խոսքը, երբ ԼՂՀ բյուջեի առյուծի բաժինը ՀՀ բյուջետային մուտքերի հաշվին է գոյանում, երբ աշխարհի ոչ մի երկիր, նույնիսկ Հայաստանը, չի ճանաչել այդ անկախությունը: Աղմկել, թե արցախցիներն օտարերկրացիներ են, նշանակում է Արցախը ներկայացնել իբրեւ մի «սեւ խոռոչ», որի բնակիչները եւ կան, եւ չկան (ասելով ԼՂՀ-ն միջազգային հանրության համար առնվազն գոյություն չունի) կամ նրանց պարզապես հարեւան երկրի Ադրբեջանի քաղաքացիներ հռչակել, ընդառաջ գնալով ադրբեջանական կողմին:

ԼՂՀ պաշտպանության նախարարն ինքը արցախցու ուղղամտությամբ արդեն իսկ բացատրել է Հայաստանի ընտրություններով հետաքրքրվելու իր «շահը». Արցախի գոյատեւման երաշխիքը Հայաստանն է, եւ Հայաստանում տեղի ունեցող որեւէ գործընթաց, առավել եւս առաջիկա չորս տարվա քաղաքական կլիման կանխորոշելու կոչված խորհրդարանական ընտրությունները չեն կարող անտարբեր թողնել արցախցիներին, եւ իրավացի էր նույն Հրանտ Խաչատրյանը, երբ պահանջում էր, հավատարիմ մնալով ՀՀ հռչակագրին, նրանց մասնակից դարձնել ՀՀ օրենսդիր մարմնի ընտրություններին:

Որեւէ մեկի համար, կարծում եմ, գաղտնիք չէ, որ ընտրապայքարում ներգրավված կուսակցությունների ընտրարշավը «թքու թան չէ, կուսակցական անդամավճարների բան չէ»: Յուրաքանչյուրին, այո, ինչ-որ (հաճախ արտաքին) կառույցներ կամ անհայտ (հաճախ ոչ հայ) բարեգործներ հովանավորում են: Այդ առիթով հուզվելու, առավել եւս նեղտնելու անհրաժեշտություն, կարծում եմ, չկա. այդպիսին է առայժմ բազմազգ կուսակցությունների երկիր Հայաստանս: Ինչ վերաբերում է արցախցիներին, ապա այս պարագայում ի վերջո պետք է հասկանանք. Արցախն արտաքին՝ ն, «Մեկ ազգ, մեկ հայրենիք»-ը սոսկ գեղեցիկ կարգախո՞ս են համարում, թե՞ տեր են 88-ի «միացումին» եւ «պայքարին»: Ընդսմին չմոռանանք, որ եթե ամերիկահայի կամ ֆրանսահայի «հայաստանցիությանը» խանգարում է երկիրդարձությունն արգելող սահմանադրական դրույթը, ապա արցախցիների պարագայում այդ էլ չկա, քանզի նրանք կամ ՀՀ քաղաքացիներ են (դատելով ՀՀ հռչակագրից) կամ... «դե յուրե» քաղաքացիություն չունեն: Արտահերթ նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանի հաղթանակը, որ անխոնջ եւ պարադոքսալ վիճարկվում է տարօրինակ զուգադիպությամբ նույն ժամը ցույց տվող «փչացած ժամացույցների» կողմից, յուրաքանչյուր մի հանրաքվե էր, որ այդ «կամ»-ը հստակ առաջին տարբերակի լուծեց: Սակայն «հրեշների» փնտրտուքն, ավաղ, շարունակվում է...

Ցավալի է, որ այս պարագայում արցախցիներին իրենց «տեղը ցույց տալու» մտայնությանը տուրք են տալիս նաեւ «Միասնություն» միավորման որոշ գործիչներ ուժեղին ոչ այնքան հարիր (ճիշտ է, զուսպ) անհանգստություն դրսեւորելով «արցախյան միջամտության» նկատմամբ: Ոչ պակաս անհասկանալի է, երբ արցախցի ղեկավար այրերն անգգույշ հայտարարություններով իրենք են ջուր լցնում ՀՀ նախագահի դիրքերը հետեւողականորեն սասանել փորձող նորաթուխ ընդդիմադիրների ջրաղացին: Սամվել Բաբայանն, օրինակ, հայտարարում է, թե «երբեք չի սատարել եւ չի սատարելու ՀՀ իշխանություններին» նկատի ունենալով, որ «չի օգտագործվել եւ չի օգտագործվելու» նրանց կողմից: Գեներալի անհաշվենկատ արտահայտությունը, թերեւս, պալատական ինտրիգներով լի եւ խարդավանքներով հարուստ հայաստանյան մթնոլորտը թերագնահատելու հետեւանք է, լուն ուղղ դարձնելու եւ ոչնչից մեծ աղմուկ ստեղծելու հայ քաղաքական մտքի թերարժեւորում:

Կամ՝ վերջերս մամուլի ուշադրության կենտրոնում հայտնված ԼՂՀ ԳԽ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Սուրեն Պետրոսյանը հայտարարում է, թե դարաբաղցի-հայաստանցի հակասությունների սրումը Քոչարյանի՝ ՀՀ նախագահի պաշտոնին անհամապատասխանության հետեւանք է: Հետաքրքիր է, թե ո՞ւմ է տեսնում պրն Պետրոսյանն այդ պաշտոնում Արցախի դատին ի նպաստ. նրանց, ովքեր Ռոբերտ Քոչարյանի դարաբաղցի լինելը մատի փաթաթան էին դարձրել եւ այսօր էլ շարունակում են ձգե՞լ այդ ծամոնը...

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայաստանը մասնակցեց «Հյուսիսային Կովկաս» ընկերակցության խորհրդի հերթական նիստին

Օրերս Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ Եվգենի Պրիմակովի մասնակցությամբ եւ Հյուսիսային Օսիա-Ալանիայի նախագահ Ալեքսանդր Զասոխովի նախագահությամբ Վլադիկավկազում տեղի ունեցավ Հյուսիսային Կովկասի հանրապետությունների, երկրամասերի ու մարզերի սոցիալ-տնտեսական համագործակցության («Հյուսիսային Կովկաս») ընկերակցության խորհրդի հերթական նիստը: Խորհրդաժողովին մասնակցել է նաեւ Հայաստանի պատվիրակությունը: հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Էդվարդ Թադեւոսյանի գլխավորությամբ: Հայաստանի իշխանությունների անունից նա ողջունել է այդ հանդիպման մասնակիցներին: Ռուսաստանի ու Կովկասի փոխգործողությունը համաշխարհային պատմության ամենաբարդ ու նշանավոր երեւույթներից մեկն է: 18-րդ դարի վերջում, 19-րդ դարի սկզբներին Կովկասը դարձավ ռուսական պետության մի մաս, բազմացնելով նրա բազմաազգային ու տնտեսական ներուժը: Դրա հետ մեկտեղ պետք չէ մոռանալ, որ Արեւմուտքի ու Արեւելքի քաղաքակրթների համար Կովկասն ավանդաբար դժվար լուծելի հիմնահարցերի կծիկ է: Ահա թե ինչու նրանք համառորեն աշխատել են Կովկասի ժողովուրդների հետ ամենահարմար վարչա-կառավարչական եւ տնտեսական փոխհարաբերությունները մշակելու նպատակով, նշել է Հայաստանի ներկայացուցիչը:

Նա այնուհետեւ կարեւորել է Անդրկովկասի երկրների հետ ՌԴ հյուսիսկովկասյան սուբյեկտների սոցիալ-տնտեսական ու մշակութային համագործակցության զարգացման արդիականությունն ու կարեւորությունը: Նա մասնավորապես ընդգծել է «Հյուսիսային Կովկաս» ընկերակցության անդամների ու Անդրկովկասի հանրապետությունների փոխշահավետ շփումների մեխանիզմի մեթոդների, ծեւերի կատարելագործման հարցերը: Կովկասյան տարածաշրջանում սոցիալ-տնտեսական ու մշակութային համագործակցության զարգացումը հարուստ փորձ ունի խարսխված է տնտեսական, քաղաքական եւ իրավական երբեմնի ընդհանուր տարածության շրջանակներում համագործակցության բազմամյա պրակտիկայի վրա:

Սակայն ԽՍՀՄ տրոհումից հետո փոփոխվել են սոցիալական շատ իրականություններ, որոնք պայմանավորել են ոչ միայն Կովկասում, այլեւ եսխորհրդային ողջ տարածության վրա հորիզոնական կապերի ծեւափոխումը: Անկասկած, երկրներից ու տարածաշրջաններից յուրաքանչյուրն ունի իր արտաքին տնտեսական շահերն, իր քաղաքական հիմնադրույթները, սակայն նախկին ԽՍՀՄ շրջանակներում բազմակողմանի համագործակցության այլընտրանք այժմ չկա: Չափազանց շատ բան է մեզ միավորում. խնդիրները լուծելու արդարական եւ տեխնոլոգիական միացյալ ծեւերը, աշխարհընկալման համանման կատեգորիաները: Դրա հետ մեկտեղ մեր տարածաշրջանի երկրների միջեւ գոյություն ունի արտաքին քաղաքական հիմնահարցերի մի ամբողջ շարք, որոնք իրենց լուծումն են պահանջում փոխզիջումային հիմքի վրա, բանակցությունների սեղանի շուրջ մասնակցեց Հայաստանի ներկայացուցիչը: Ուստի դժվար է գերագնահատել այն հեռանկարները, որ մեր առջեւ կբացի տնտեսական ու մշակութային համագործակցության կատարելագործումը եւ կստիպի մեզ նորովի հայացք նետել այսօր անլուծելի թվացող հակասություններին, հաղթահարել կովկասյան տարածաշրջանի սուբյեկտների մեկը մյուսից հեռանալու հետ կապված թյուրըմբռնումը:

Կովկասի այսօրվա իրավիճակը, Ռուսաստան-Կովկաս փոխհարաբերությունների վիճակը հրամայաբար գիտակցորեն հիմնավորված ու քաղաքականապես ճշգրտված գործողություններ են պահանջում, շարունակեց էդ. Թադեւոսյանը: Ռուսաստան-Կովկաս հարաբերությունների այժմյան վիճակը նաեւ սուր կերպով առաջ է քաշում հետխորհրդային երկրների մերձեցման հարցն ինչպես միջպետական մակարդակով, այնպես էլ առանձին տարածաշրջանների միջեւ: Նման մերձեցումն այժմ արդեն ընթացքի մեջ է. այսպես Հայաստանը համագործակցության համաձայնագիր է ստորագրել ՌԴ մի շարք սուբյեկտների հետ. Մոսկվա եւ Մոսկվայի մարզ, Սանկտ Պետերբուրգ, Սամարայի ու Սվերդլովսկի մարզեր: Նախապատրաստվում է Վրաստանի ու Հայաստանի միջեւ բազմակողմանի ու բազմազան համագործակցության մի շարք: Հայաստանը հանդես է եկել Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի եւ Ռուսաստանի հյուսիսկովկասյան տարածաշրջանի միջեւ համագործակցության կոնկրետ առաջարկություններով:

Հայաստանի ներկայացուցիչը կարծիք է հայտնել, որ վլադիկավկազյանի պես համաժողովները հնարավորություն են ընձեռում բազմակողմանի մերձեցման գործընթացը մտցնել կազմակերպված, համակարգված հունի մեջ, ընդլայնել փոխշահավետ համագործակցության կարեւորագույն բնագավառները կարգավորող նորմատիվ ակտերի գործողության ոլորտը: «Հյուսիսային Կովկաս» ընկերակցության ստեղծումը լավ հեռանկարներ է բացում ավելի լայն միջազգային բնույթ ունեցող ծրագրերի մեջ դրա անդամներին ներգրավելու համար: Սոցիալ-տնտեսական եւ մշակութային նախագծերից բացի «Հյուսիսային Կովկաս» ընկերակցությունն ունի անկասկած քաղաքական երանգ, որն ուղղված է տարածաշրջանում բարիդրացիական հարաբերությունների ծեւավորմանն ու ամրապնդմանը, վստահության ու կայունության գոտու ընդլայնմանը: Հայաստանը գիտակցում է տարածաշրջանային ինտեգրացման հեռանկարայնությունն ու արդյունավետությունը եւ հնարավոր բոլոր ջանքերը կներդնի ընկերակցության որոշումներում նախատեսված դրույթները իրականացնելու, հավատարիմ մնալ հանրապետության պատվիրակության ղեկավարը:

Համաժողովում մի շարք բանախոսներ կարեւորել են Հայաստանի միջոցով Հյուսիսային Կովկասից դեպի Իրան եւ հակադարձ ճանապարհով բեռնափոխադրումների հնարավորությունը:

Նիստի ընդունած որոշման մեջ նախատեսվում է այս տարվա ընթացքում անցկացնել Հյուսիսային Կովկասի արդյունաբերողների, ձեռնարկատերերի, ֆինանսական ու գործարար շրջանակների ներկայացուցիչների, ԱՊՀ տարածաշրջանների եւ կազմակերպությունների տնտեսագիտական համաժողով, ուր պիտի քննարկվեն արտաքին տնտեսական գործունեության զարգացման առաջնահերթ հարցեր:

Որոշված է անցկացնել մշակույթի ու արվեստի «Խաղաղությունն Կովկասին» փառատոն, ուր հրավիրված են Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ստեղծագործական կոլեկտիվներ:

ՏԻԳՐԱՆ ԱՎԱՆՅԱՆ
ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակից,
«Ազգի» համար

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

«ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ»

Հունգարիայի փխրուն կացությունը

Ամերիկայի եւ Ռուսաստանի դիրքորոշումներին զուգահեռ այժմեական է իմանալ Արեւելյան Եվրոպայի երկրների դիրքորոշումն իրենց հարեւան երկրում Հարավսլավիայում ծավալվող իրադարձությունների նկատմամբ: Այդ առումով խիստ հետաքրքրական է «Նյու Յորք թայմս» թերթի ապրիլի 22-ի համարում տպագրված Հունգարիայի խորհրդարանի նախկին անդամ, ներկայումս Կալիֆոռնիայի համալսարանի «Բուդապեշյան ծրագիր» քաղաքական ուսումնասիրությունների բաժնի պրոֆեսոր Միկլոշ Հարաշտիի հոդվածը, որը քարգմանաբար ներկայացնում ենք:

ՆԱՏՕ-ի երեք նոր անդամներից մեկը՝ Հունգարիան, արժանավայել պաշտպանում է Հարավսլավիայի դեմ դաշինքի ծավալած սարսափելի պատերազմը: Բացի արեւմտաայաց ուղղափառ կոմունիստների եւ ծայրագույն աջակողմյան համարվող օտարայացների փոքրիկ համախմբումից, Հունգարիայի հասարակությունը ընդհանուր առմամբ պաշտպանում է ՆԱՏՕ-ի մարդասիրական եւ ժողովրդավարական նպատակները, որոնք ուղղված են վերջ տալու Սլոբոդան Միլոշեւիչի էթնիկական զտման քաղաքականությանը: Բայց Արեւմուտքը պետք է հավի առնի Հունգարիայի եզակի եւ փխրուն կացությունը՝ նախքան նրա հավատարմությունը ծանրաբեռնելու այնպիսի պահանջներով, որոնք երկիրն ի վիճակի չէ իրագործել:

ՆԱՏՕ-ն չպետք է ցամաքային զորքեր ուղարկի Հունգարիայից, որը սահմանակից է Հարավսլավիային: Ավելին, Հունգարիայից զինվորներ չպետք է գնան կռվելու Հարավսլավիայի բանակի դեմ, որտեղ ծառայում են նաեւ էթնիկ հունգարացիներ: Հարցի ցանկացած կարգավորման դեպքում անհրաժեշտ է պահպանել Սերբիայի էթնիկ հունգարացիների շահերը:

Հունգարիայի փխրուն դիրքը պայմանավորված է ինչպես պատմությամբ, այնպես էլ աշխարհագրական դիրքով: Սերբեր կան Հունգարիայում եւ հունգարացիներ՝ Սերբիայում: Հարյուր հազարավոր ծագումով հունգարացիներ ապրում են Վոյեվոդինայում՝ Հունգարիայի հարավում գտնվող սերբական նահանգում: Սահմանը բաց է, եւ հարավսլավացիները դեռեւս կարող են առանց վիզայի մուտք գործել Հունգարիա: Շեգեդի եւ Բուդապեշտի հյուրանոցները լեցուն են հարավսլավացիներով, որոնք հակամարտության ավարտին են սպասում, եւ սերբերեն կարելի է լսել ամենուրեք:

Հունգարացիները հաջ գիտակցում են, որ Հարավսլավիայի ամեն մի թիզը ենթակա է ռմբակոծման, քանի որ պրն Միլոշեւիչը ցանկացած վայրում կարող է կենտրոնացնել իր զինվորական ներուժը: Բայց թիրախ դարձած քաղաքներն այստեղ հունգարական անուններով են ներկայացվում: Անցյալ շաբաթ ռմբակոծված արվեստների սիրուն քաղաքն, օրինակ, Շաբատկան է եւ ոչ թե Սուբոտիկան կամ Վոյեվոդինայի մայրաքաղաքը Ույվիդեկն է, ոչ թե Նովի Սադը, որտեղ խորտակված կամուրջները հիշեցնում են երկրորդ աշխարհամարտի օրերին Բուդապեշտում խորտակված կամուրջները: Այս վայրերը «նրա՞նցն» են, թե՞ «մերը»:

Հունգարիան Վոյեվոդինայի նկատմամբ դիտավորություններ չունի: Նա իր հարեւանների հետ պայմանագրեր է ստորագրել «էթնիկական իրավունքներով հողակտորների» վերաբերյալ եւ պատրաստ է նույն վերաբերմունքը ցուցաբերել Հարավսլավիայի նկատմամբ, եթե վերջինս լավ վերաբերվի հունգարացիների հետ: Բայց այս րոպեին Վոյեվոդինայի հունգարացիներն զգում են (եւ իրականում էլ այդպես է), որ իրենք պատանդ են ռազմական մի արշավի, որը չնայած խրախուսվում է Հունգարիայի կողմից, սակայն նպատակ չունի բարելավելու իրենց վիճակը: Իսկ այդ վիճակն իր էության եւ հնարավոր ելքի մեջ շատ նման է Կոսովոյի ալբանացիների վիճակին: Պրն Միլոշեւիչը ջնջեց Վոյեվոդինայի ինքնավարությունը նույն հրամանով, որով ջնջեց Կոսովոյինը: Վախ կա, որ նա վրեժ կլուծի Վոյեվոդինայի հունգարացիներից որպես փոխհատուցում Հունգարիայի անդամակցությանը ՆԱՏՕ-ին:

Վոյեվոդինայի հունգարացիները փողոցային ցույց-բողոքների եւ պարտիզանական կռիվների փոխարեն ընտրել են հանրաքվեի քաղաքակիրթ ձեւը՝ վերականգնելու իրենց ինքնակառավարման իրավունքը: Անցած տասնամյակում նրանք ամենակազմակերպված ժողովրդավարական քաղաքական ուժը ստեղծեցին ամբողջ Սերբիայում, եւ եթե նրանց կարծիքը հարցնող լիներ, առնվազն երկու հարցում կկարողանային զգուշացնել ՆԱՏՕ-ին Միլոշեւիչի հետ վարվելու գործում:

Առաջին, նրանք խորհուրդ կտային ՆԱՏՕ-ին, որ վերջնագիր չներկայացնի, որովհետեւ դրա խստությանն ակներեւաբար հետեւելու էր օդային հարձակումը:

Երկրորդ, նրանք դեմ կլինեին, որ նույնիսկ բենամանի դեպքում Կոսովոյից հեռացվեին անզեն դիտորդները, որոնց համար բանակցել էր Ռիչարդ Հոլբրուկը: Մի հավատացեք, կասեին նրանք, թե ռումբերն ավելի զորեղ են, քան արեւմտյան ականատեսներն իրենց շարժական հեռախոսներով:

Այս պատերազմի ավարտից անմիջապես հետո Կոսովոյում միջազգային մի համագումար է տեղի ունենալու: ՆԱՏՕ-ն պարտավոր է ընդլայնել այդ համագումարի գործունեության շրջանակները, որպեսզի ընդգրկի նաեւ անվտանգության երաշխավորություն բոլոր էթնիկական խմբավորումների, այդ թվում նաեւ Վոյեվոդինայի հունգարացիների համար:

Եթե սա դառնա առաջնահերթ խնդիր ՆԱՏՕ-ի համար, այդ ժամանակ կուժեղանա ՆԱՏՕ-ին աջակցելու հունգարացիների ժողովրդավարական պարտավորության զգացումը, որն այնքան անհրաժեշտ է այս բավականին ադոս մարտավարությամբ առաջ մղվող պատերազմում:

Սառույցը հալվում է Դամասկոսի եւ Բաղդադի միջեւ

Սիրիայի արտգործնախարար Ֆարուք Շարաան լոնդոնյան «Ալ Հայաթ» թերթին հայտնել է, որ շուտով Դամասկոսում եւ Բաղդադում գտնվող ալժիրյան դեսպանատներում բացվելու են Իրաքի եւ Սիրիայի շահերը պաշտպանող գրասենյակներ, ինչը չի հակասում Իրաքի նկատմամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատժամիջոցներին: Նախարար Շարաան նշել է նաեւ, որ այս քայլի վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել դեռեւս անցյալ փետրվարին Իրաքի արտգործնախարար Մուհամադ Սաիդ Սահաֆի Դամասկոս այցելելու ժամանակ: Սիրիա-իրաքյան հարաբերությունները սկսեցին բարելավվել 1997 թ.-ից, երբ բացվեցին 2 երկրների միջեւ սահմանային անցակետերը աղրանքափոխանակման համար, ըստ «Նավթ՝ սննդի դիմաց» համաձայնագրի, որի համաձայն արտնվում է սննդամթերք ու դեղորայք ներմուծել Իրաք: 2 կողմերի համաձայնությամբ Իրաք-սիրիական նավթամուղը կվերագործարկվի, որը Իրաքյան նավթը Կերկուքից տեղափոխում էր Միջերկրական ծովի սիրիական Բանիաս նավահանգիստ: Ավելին, Իրաքյան կողմն արդեն ավարտել է այդ խողովակաշարի իր հատվածի վերականգնումը, սպասելով դրա սիրիական մասի վերանորոգմանը:

Դիտորդները գտնում են, որ առայժմ Դամասկոսը հարաբերականորեն հաջողել է Բաղդադի հետ իր հարաբերություններում՝ քաղաքականը տնտեսականից անջատելու գործում: Այս առումով, Սիրիան աշխուժացրել է առեւտրական կապերը եւ վերաբացել սահմանները, դա չզուգորդելով 2 երկրների դիվանագիտական հարաբերությունների վերականգնմամբ: Այդ կապերը խզվել էին 1982 թ.-ից Իրաք-Իրանյան պատերազմի (1980-88 թթ.) հանդեպ Դամասկոսի առարկող կեցվածքի պատճառով:

Եվ չնայած 2 երկրներում իշխող Բաաս կուսակցության 2 հատվածների միջեւ եղած պատմական տարաձայնություններին, այնուհանդերձ Դամասկոսը միշտ հավատիացրել է, թե հետամուտ է Իրաքյան ժողովրդի շահերի եւ տարածքների միասնականության պաշտպանությանը, եւ հաճախ կոչ է անում վերացնել տնտեսական էմբարգոն: Ավելացնենք նաեւ, որ հունվարին Կահիրեում կայացած արաբ արտգործնախարարների ժողովում Սիրիան եռանդուն ջանքեր թափեց ստեղծելու արաբական այն հանձնախումբը, որը ձգտելու էր Իրաքի նկատմամբ պատժամիջոցները վերացնելուն: Սակայն հանձնախումբը ի վիճակի չեղավ լուրջ գործունեություն ծավալել առայժմ Բաղդադի խոչընդոտելու պատճառով:

Ա. Մ.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ադրբեջանցի քաղաքագետները մեկնաբանում են Ռոբերտ Քոչարյանի եւ Հեյդար Ալիեւի հանդիպումը

ԵՐԵՎԱՆ, 27 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Չնայած վերջերս Վաշինգտոնում ԱՄՆ պետքարտուղարի մասնակցությամբ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի միջեւ կայացած հանդիպման մասին որեւէ մանրամասն չի հաղորդվում, այնուամենայնիվ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին կապերի բաժնի ղեկավար Նովրուզ Մամեդովը արտահայտվել է առնվազն երկու պահերի առկայության մասին, որոնք այդ նախաձեռնությունը նշանակալից են դարձնում: Որպես այդպիսիք նա նշել է այն հանգամանքը, որ հանդիպումն անց է կացվել ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում եւ որպես հանդիպման նախաձեռնող հանդես է եկել Սպիտակ տունը: «Եթե ԱՄՆ-ը գործի է կցնում, ապա դրանից հետ չի կանգնում, քանի դեռ հիմնախնդիրը չի լուծել», գտնում է Մամեդովը:

Մինչդեռ Ադրբեջան-ՆԱՏՕ համագործակցության ընկերության նախագահ Չիյաֆեթ Ասկերովը գտնում է, որ արդեն ժամանակն է որոշելու Բաքվի արտաքին քաղաքականության նոր գերակայությունները: Նրա խոսքերով, «Վաշինգտոնում նստածները պրագմատիկներ են, եւ, ի տարբերություն Ռուսաստանի, նրանց դիրքորոշումները ավելի իրատեսական հիմք ունեն»:

Բաքվի մի շարք քաղաքական մեկնաբաններ նույնպես գտնում են, որ Բալկանյան ճգնաժամի հաղթահարումից հետո Ամերիկայի եւ ՆԱՏՕ-ի ուշադրությունը կբեւեռվի դարաբաղյան տարածաշրջանի վրա: ԱՄՆ-ը մտադիր է Ռուսաստանին ստիպելանաբար դուրս մղել Կովկասյան տարածաշրջանից եւ քայլեր է ձեռնարկում ավելի մեծ պատասխանատվություն վերցնելու իր վրա Կովկասյան տարածաշրջանի հիմնախնդիրներն ու հակամարտությունները լուծելու հարցում»», Բի Բի Սի ռադիոկայանի ադրբեջանական ծառայության թղթակցի հետ զրույցի ժամանակ ասաց Միլի մեջլիսի պատգամավոր, քաղաքագետ Մուբարիզ Գուրբանլին:

Սակայն ոչ բոլոր ադրբեջանցի քաղաքագետներն են միանշանակ ողջունում Արեւմուտքի, այդ թվում ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի ազդեցության աճը տարածաշրջանում: Այսպես, Ադրբեջանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահ Զարդուշտ Ալիզադեն Ադրբեջանի համար ոչ մի լավ բան չի տեսնում դարաբաղյան հիմնախնդրի լուծման հարցում Ամերիկայի ավելի ինտենսիվ միջամտությունից: «Ո՞վ է ուժեղ կողմը: Հայաստանը: Նա ռազմական հաղթանակ է տարել, ուժեղ դաշնակից ունի եւ ուժեղ դիրքորոշում: Ադրբեջանական կողմը ռազմական առումով պարտություն է կրել, դաշնակից չունի, ավելի սույլ՝ ոչ մի հաղթաթուղթ չունի: Ի՞նչ կասի Ադրբեջանը: Կհայտարարի, թե հրաժարվո՞ւմ է նավթ վաճառելուց: Չի կարող, քանզի արդեն միջազգային պայմանագրեր են կնքվել», հայտարարել է Զարդուշտ Ալիզադեն:

Ուկրաինան Վրաստանին մարտական նավ կհանձնի եւ կնախաստրաստի անձնակազմին

ՔԻԵՎԻ, 27 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Առաջիկա օրերին Ուկրաինա կուղեւորվեն ինը վրացի զինծառայողներ, որոնք կնախապատրաստվեն մարտանավ վարելուն, որը ուկրաինական կողմը այս տարվա մայիսի վերջերին մտադիր է հանձնել Վրաստանի ռազմածովային ուժերին: Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսում Վրաստանի պաշտպանության նախարարության միջազգային հարաբերությունների գծով փոխնախարար Գրիգոլ Կասամածեն հայտարարեց, որ Ուկրաինա մեկնող ինը զինծառայողները կդառնան նավի անձնակազմի հիմքը: Կասամածեն հայտարարեց, որ ուկրաինական կողմը մտադիր է Վրաստանի պաշտպանական գերատեսչությանը հանձնել 206 տիպի նավ, որը դասվում է փոքր պահակային նավերի դասին եւ հանդերձված է տորպեդային զենքերով: Գրիգոլ Կասամածեն նշեց, որ վրացական կողմը նավը ձեռք է բերում «Վրաստանի պաշտպանության նախարարության ներքին ռեզերվների» հաշվին եւ դրա վրա բյուջետային միջոցներ չեն ծախսվի:

ԱՄՆ-ը հաղթեց բանանային պատերազմում

«Պուեն» հանդեսը, եվրամիության քաղաքների խորին համակարգը շատ խոցելի է, քանզի ամբողջովին հիմնված է առավել բարենպաստ ռեժիմի վրա: Հարց է ծագում, թե ինչո՞ւ պետք է օգնել հենց կամերունին եւ ոչ թե, ասենք, էկվադորին: Բացի դրանից, եվրամիության երկրների մի մասը գերմանիայի գլխավորությամբ այլեւս վստահ չէ, թե արժե պահպանել խստաբարկան քվոտաները: Առեւտրի համաշխարհային կազմակերպությունը իր որոշմամբ ԱՄՆ-ի ձեռքը տվեց խոշոր տարժայտիի զենք, որն ամեն դեպքում օգտակար կլինի ամերիկացիների համար:

տ.

digitised by A.R.A.R.@

«Թանկարժեք ժառանգություն»

Ապրիլի 25-ին Կամերային երաժշտության տանը Արամ Ղարաբեկյանը իր նվագախմբի հետ երեւանցի ունկնդիրներին առաջին անգամ ներկայացրեց Ռիխարդ Շտրաուսի վերջին ստեղծագործություններից մեկը՝ «23 գործիքի եւ 23 ձայնի էյուդը», որն սացել է «Մետամորֆոզ» անվանումը: Կոմպոզիտորը ստեղծագործությունն ավարտել է 1945 թ. փետրվարի վերջերին պատերազմի ավարտից մի քանի շաբաթ առաջ, երբ Գերմանիան կործանվում էր:

Ռիխարդ Շտրաուսն այդ ժամանակ 80 տարեկան էր: 20-րդ դարի վերջին ռոմանտիկի ստեղծագործական մեծ կյանքը ավարտվում էր համաշխարհային քաոսի հայեցությամբ: Այդ ժամանակ Շվեյցարիայում գտնվող Շտրաուսին լուրեր էին հասնում Բեռլինի Ունտեր դեն Լինդեն պողոտայում գտնվող, Դրեզդենի, Վիեննայի օպերայի շենքերի կործանման մասին: Հուսահատության պահին Շտրաուսը Վիեննայում գտնվող իր լիբրետիստին գրում էր. «Ավերված է Գյոթեի տունը՝ աշխարհի այդ մեծագույն սրբությունը: Իմ հիասքանչ Դրեզդենը, Վայմարը, Մյունխենը, ամեն ինչ փոշի դարձավ...»:

Բայց չնայած կոմպոզիտորին համակած անսփոփ վշտին, այդ զարմանալի ստեղծագործության մեջ, որի մեղեդային ակունքը Բեթհովենի «Հերոսական սիմֆոնիայի» սգո քայլերգի առաջին չորս տակտերն էին, նշմարվում էր աղոտացուցիչ, վշտի մեջ հազիվ նկատելի եւ խաղաղ Հույսի ու Լույսի ընձյուղումը: Եվ դա թերեւս ամենաարժեքավորն էր այդ հրաշալի ստեղծագործության մեջ, որը ժամանակակիցներն անվանեցին «գալիք սերունդներին հասցեագրված թանկարժեք ժառանգություն»:

Եվ որքա՜ն արդիական հնչեց այդ ստեղծագործությունը մեր օրերում, մեզ համար, երբ Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակն այսօր միահյուսվում է Հարավսլավիայի ռմբակոծումների կարակցությամբ ողջ աշխարհը համակած հուզումներին, ռմբակոծումներ, որոնք մարդկությանը կանգնեցրել են երրորդ աշխարհամարտի շեմին:

Հազվադեպ է պատահում, երբ երաժշտությունն այսքան ներդաշնակորեն է գործում ունկնդիրների զգացումների ու խոհերի աշխարհը: Եվ այդ անմոռանալի հոգեներ պարգեւողը Արամ Ղարաբեկյանն էր:

Իր խորագիտակության ու նաեւ ինտուիցիայի շնորհիվ նա երաժշտության ծովում գտել է հենց այն, ինչը բառացիորեն անհրաժեշտ է լսել այսօր, եւ ինչը կարող էր դառնալ բոլոր ժամանակների ու ժողովուրդների ողբերգությունների հուշարձանը:

Ռիխարդ Շտրաուսը «Մետամորֆոզ» անվանել է իր «ամբողջ կյանքի արտացոլանքը»: Եվ կախարդական կես ժամվա ընթացքում Ղարաբեկյանի ղեկավարությամբ ունկնդիրների մտավոր հայացքի առջեւ ծփում էին ճակատագրի ռոմանտիկ ալիքները, բորբոքվում ու մարում էին խարույկները, անկասելիորեն կանչում էին հորիզոնները, փայլում էր երկինքը, եւ հանգիստ չէր տալիս մարդու անկատարությանը վերաբերող միտքը, բայց ոչ մի ռոմք չէր թուլանում Հույսը, որը կրկին ու կրկին փրկություն էր որոնում կյանքի խորխորատներում:

Այդ երաժշտական իրադարձությունն այլի ընկավ... Մոցարտի ներկայությամբ. ռե-մինոր դիվերտիսմենտը նրբագեղ եւ մի տեսակ հեռավոր հնչեց համերգի սկզբում: Դիրիժորն իր ներածական խոսքում խոստովանեց, որ ինքը երկար ժամանակ փնտրում էր մի ստեղծագործություն, որը կարող էր նախորդել Ռիխարդ Շտրաուսի «Մետամորֆոզին» համերգի այդ գլխավոր գաղափարին: Եվ պետք է ասել, որ նա այստեղ եւս չսխալվեց. 20-րդ դարի արվեստի ողբերգականությունը ինչ-որ առանձնահատուկ հստակությամբ երեւում է գեղեցիկ դասական գործի ֆոնի վրա, որը ծգտում է ներդաշնակության եւ հստակորեն ներկայացնում դրա ուրվագծերն ու ձեւերը, ոգին: Միեւնույն ժամանակ, ըստ էության, ամեն ինչ ասված է եւ արդված, եւ այն էլ ինչպիսի գեղարվեստական մակարդակով: Պատահական չէ, որ Ռիխարդ Շտրաուսը խոր մորմոքի քրոջերին, իր իսկ խոստովանությամբ, գրեթե անգիտակից հարել է Բեթհովենի ողբերգական մեղեդուն:

Միահյուսվում էին ժամանակներն ու ծգտումները, ծնունդ էր առնում երաժշտությունը, իսկ կատարողները այնուհետեւ պետք է դրան նոր կյանք տային, դարձնեին նոր հայտնագործումների գեղեցիկ, նոր իրադարձությունների մասնակից: Եվ երբ դա տեղի է ունենում, ստեղծագործությունը ձեռք է բերում պահի սրբազնությունը, իսկ կատարողը լիովին իրականացնում է գեղարվեստական վեհ գաղափարներ տարածողի իր առաքելությունը:

Ռիխարդ Շտրաուսի «թանկարժեք ժառանգությունը» մատուցվեց ունկնդիրներին դառնալով աշխարհի բոլոր ողբերգությունների եւ այդ թվում 1915 թ. Ցեղասպանության ողբերգության հուշարձանը, ի հիշատակ որի հնչում էր երաժշտությունն այդ երեկո:

Այդ համերգի հովանավորներն էին Վայլե եւ Թամար Մանուկյանները:

ՄԱՐԳԱՐԻՏ ՌՈՒԲԻՆՅԱՆ

ԿՈՆՖԵՐԱՆՍ

Խորհրդակցում են գրադարանային միությունների ներկայացուցիչները

Ս. թ. ապրիլի 18-21-ը Թբիլիսիում տեղի ունեցավ հարավ-կովկասյան տարածաշրջանային 2-րդ կոնֆերանսը, որը նվիրված էր գրադարանային միությունների տարածքային համագործակցության խնդիրներին:

Կոնֆերանսը, որին մասնակցում էին Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի պատվիրակությունները եւ Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Չեխիայի ներկայացուցիչները, կազմակերպել էր Վրաստանի տեղեկատվության մասնագետների միությունը (նախագահ Բեսիկ Ստվիլյա):

Կոնֆերանսի բացումը ողջունեցին Վրաստանի խորհրդարանի հանձնաժողովի նախագահ Ռամազ Սակվարելիձեն եւ IREX-ի կովկասյան գրասենյակի տնօրեն Ռիչարդ Սվոնսոնը:

Կոնֆերանսում քննարկվեցին կատալոգավորման համար անհրաժեշտ նկարագրության ստանդարտներին եւ գրադարանային կադրերի վերապատրաստմանը նվիրված հարցերը: Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի ներկայացուցիչները տեղեկատվություն փոխանակեցին իրենց հանրապետություններում այդ ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Վրաստանի տեղեկատվության մասնագետների միությունը կոնֆերանսի քննարկմանը ներկայացրեց գրադարանների եւ գրադարանային միությունների հարավ-կովկասյան կոնֆեդերացիա ստեղծելու կանոնադրությունը:

Քննարկումը ցույց տվեց, որ կանոնադրությունը լիովին չի արտահայտում կողմերի դիրքորոշումները, թերի է եւ կարիք ունի վերամշակման:

Ընդունվեց հռչակագիր, որով կողմերը պատրաստվում էին կոնֆեդերացիա ստեղծելու գաղափարը եւ պատրաստակամություն հայտնում կանոնադրությունը վերամշակելու եւ հիմնադիր ժողովին ներկայացնելու:

Կոնֆերանսի զեկուցումները հանգամանալի տեղեկատվություն կտրամադրվի «Ասոցես» թերթում:

ՌՈԲԵՐՏ ՂԱՀԱՐՅԱՆ

ԲԱԿՈՒՆՑ-100

Ակսել Բակունցի հոբելյանական տարելիցը՝ խոսուն ծրագրերով

Գորիսում բնավ էլ ոչ մեծ տարեգրություն, բայց արդեն ավանդական կնիք ունեն բակունցյան օրերը: Այդ համաժողովրդական ամենամյա տոնին Բակունցն ասես մեկեն ոգի է առնում, պատվավոր անդամ կարգվում ամեն օջախում, հորդորում նկատել բարին ու գեղեցիկը, նուրբն ու կուսականը:



«Ազգի» հարցին, թե ի՞նչ ծրագրերով է Գորիսի համայնքային իշխանությունը նշանավորելու մեծ գորիսեցու հոբելյանը, քաղաքապետարանի մշակույթի բաժնի վարիչ Գ. Հարությունյանը պատասխանեց.

– Տոգորության համարյա պատրաստ է «Բակունցը ժամանակակիցների հուշերում» նյութերի ժողովածուն: Նաեւ համայնքային իշխանության աջակցությամբ կտպագրվի բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի «Բակունցի դասավարությունը» գիրքը եւ կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ «Երկերի ընտրանին»: Նոր, թեմատիկ գործերով կներկայանա նաեւ Գորիսի պետական դրամատիկական թատրոնը:

Մայրաքաղաքում կազմավորված նորաստեղծ «Կյորես» հայրենակցական միությունը եւս ծրագրերի լայն շրջանակ ունի. կրթամշակութային հանձնաժողովը նախատեսել է գրողի տուն-թանգարանում կազմակերպել հոբելյանական արտագնա նստաշրջան՝ ներգրավելով ԳԱԱ-ի, ԵՊՀ-ի եւ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի անվանի գիտնականներին: Կընթերցվեն զեկուցումներ, կհրավիրվեն համույթներ, Գորիսում եւ Երեւանում կբացվեն բազմաժանր ցուցահանդեսներ:

Կսահմանվեն Բակունցի անվան կրթաթոշակ, մրցանակներ՝ տարվա լավագույն հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի եւ լավագույն գրական ստեղծագործության համար:

Ծրագրվում է (համաղաղասխան միջոցների առկայության դեպքում) սկսել Դ. Գասպարյանի, արդեն պատրաստի սցենարով, ֆիլմի նկարահանման աշխատանքները:

Տարակույս չկա, որ այս ծրագրերի հաջող իրականացումը ոչ միայն տուրք կլինի արձակի վարպետի հիշատակին, այլեւ կխթանի գրականությունից կամա թե ակամա ինքնաստարված երիտասարդության վերադարձը դեպի բարձր ու համամարդկային արժեքներ:

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գորիս

Կիմ Բակշիի անունը մեծ հայասերների կողքին է

Հայաստանի մտավորականությունը, հազվագյուտ ներկայացուցչական կազմով, ապրիլի 27-ին հավաքվել էր մշակութային կարի ընկերության սրահում՝ նշելու Կիմ Բակշիի «Սուրբ Ղազարի հարությունը» գրքի անգլերեն հրատարակության շնորհանդեսը: Գիրք՝ որն անցյալ տարի արժանացել էր ԹՄՄիության Հայկաբեն Ուզունյան» մրցանակին: Սակայն միջոցառումն ավելի շատ հանրահայտ գրողի վաստակը գնահատելու, Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ ունեցած նրա մեծ նվիրվածության համար երախտագիտություն հայտնելու բացառիկ առիթ էր: Հայ մտավորականությունն առանց վարանելու նրան դասեց մեծ հայասերների շարքում՝ Բայրոն, Նանսեն, Բրյուսով, Վերֆել... եւ Կիմ Բակշի:

Հայաստանցիները որքան էլ անծանոթ լինեն ռուս անվանի մտավորականի տպագիր ստեղծագործություններին, գոնե քաջածանոթ են «Մատենադարան» ֆիլմաշարին, որի սցենարիստն է նա: Մատենադարանի տնօրեն Սեն Արեւաբյանը ներկաներին իրազեկեց, որ Կիմ Բակշիի ծանոթությունը Հայաստանի ու հայ մշակույթի հետ սկսվել է Մատենադարանից: Չեռագրերի ուսումնասիրությունն սկսվել է 35 տարի առաջ, եւ դրա շնորհիվ էլ այսօր նա «մեծություն է», որի առաջ գլուխ խոնարհեց հայ մշակույթի գիտակներից մեկը՝ Լեւոն Հախվերդյանը: Վերջինս նշեց, որ Կիմ Բակշին այսպիսի հաջողության է հասել իր հատկանիշների՝ ծով գիտելիքների, տաղանդավոր գրող լինելու եւ մեծ սրտի շնորհիվ, որը կարող է բաբախել նաեւ ուրիշ ժողովուրդների համար: Այդ հատկանիշների շնորհիվ է, որ «Կիմ Բակշին երկու հայրենիք ունի՝ Ռուսաստան ու Հայաստան, մինչդեռ կան անհայրենիք մարդիկ», ընդգծեց արվեստաբան Հենրիկ Իգիթյանը:

Ս. Պ.

Երկու ժամ Պուշկինի հետ

Երեկ Արամ Խաչատրյան համերգային սրահում հրավիրվածները մասնակից դարձան Ալեքսանդր Պուշկինի ծննդյան 200-ամյակին նվիրված հերթական միջոցառմանը: Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի ու համագործակցության հայկական ընկերության Հայաստան-Ռուսաստան ընկերության նախագահ Վլադիմիր Գրիգորյանը բացելով միջոցառումը մանրամասն ներկայացրեց Պուշկին գրողին ու բարձր գնահատեց նրա ստեղծագործությունների դերն ու նշանակությունը: Քիչ անց բեմը տրամադրվեց Պուշկինի անունը կրող միջնակարգ դպրոցի սաներին, որոնք էլ հայերեն ու ռուսերեն ներկայացրին ռուս մեծ գրողի ստեղծագործություններից գոհարներ: Երեկոյին մասնակցեցին միջազգային բազմաթիվ մրցույթների դափնեկիր ջութակահար Նիկոլայ Մադոյանը (Գերմանիա), միջազգային մրցույթների եռակի ոսկե մեդալակիր, օպերային երգչուհի Անահիտ Մխիթարյանը, որն էլ նուրբ ելեւէջներով կատարեց «Բախչիսարայի շատրվանը» օպերայից արիաներ՝ արժանանալով երկարատեւ ծափերի: ԽՍՀՄ եւ ՌԴ ժողովրդական արտիստ Վասիլի Լանովոյին դահլիճը դիմավորեց բուռն ծափերով: Նա դերասանական փայլուն ընթերցումով ներկայացրեց Պուշկինի հայտնի «Ճանապարհորդություն երգում» ստեղծագործությունը: Վախթանգովի թատրոնի առաջատար դերասան, ՌԴ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Կուզնեցովը «Գարյուխին գյուղի պատմությունը» ստեղծագործությունով եզրափակեց երեկոն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Խզումն ավելի է մեծանում

Հայաստանի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի 7-րդ տուրում առաջատարները նոր հաղթանակներ տարան վերջադահների նկատմամբ, եւ խզումը նրանց միջեւ ավելի մեծացավ:

«Արարատ»-«Ձվարթնոց»՝ 3-0: Աբովյանում անցկացված հանդիպման սկզբում նման արդյունք դժվար էր կանխատեսել: Բարձրագույն խմբի նորեկ «Ձվարթնոցը» շատ ակտիվ սկսեց խաղը եւ առաջին 20 րոպեների ընթացքում դժվարին դրության մեջ դրեց առաջատարին: Մի քանի անգամ «Արարատին» փրկեց փորձառու դարպասապահ Հարություն Աբրահամյանը: Ասենք անաբար արարատցիները խլեցին նախաձեռնությունը եւ սուր գրոհներ կազմակերպեցին մրցակցի դարպասին: Խաղի 44-րդ րոպեին «Արարատի» արգենտինացի խաղացող Շաբաթի հարվածից հետո դեռի դարպասը սլացող գնդակը ձեռով ետ մղեց «Ձվարթնոցի» ավագ Տիգրան Գասպարյանը: Դրա համար նա կարմիր քարտ ստացավ, իսկ թիմը պատժվեց 11 մետրանոց տուգանային հարվածով: Այն վստահորեն իրացրեց «Արարատի» ավագ Կարեն Բարսեղյանը: Երկրորդ խաղակեսում «Ձվարթնոցը» տեղի տվեց, եւ առաջատարը հմտորեն իրացրեց թվային գերազանցությունը: 75-րդ րոպեին էմիլ Մեսրոպյանը 2-րդ գոլը խփեց մրցակցի դարպասը: Եվս մի քանի րոպե անց հաշիվը դարձավ 3-0 իրենց տուգանային հրապարակում «Ձվարթնոցի» խաղացողները նոր խախտում թույլ տվեցին, եւ կրկին Բարսեղյանն իրացրեց 11 մետրանոց տուգանային հարվածը:

«Շիրակ»-«Կիլիկիա»՝ 3-1: Խաղասկզբում «Կիլիկիայի» երիտասարդ ֆուտբոլիստները փորձեցին հավասար պայքար մղել դաշտի տերերի հետ, եւ դա որոշ չափով հաջողվեց նրանց: Թիմերը հանգստի գնացին, երբ հաշիվը 1-0 էր (գոլը 32-րդ րոպեին խփեց Արարատ Հարությունյանը): Երկրորդ խաղակեսի սկզբում հյուրերի ռմբարկու Արման Քարամյանը հաշիվը հավասարեցրեց, սակայն ի վերջո զգացնել տվեց շիրակցիների փորձառությունը: Արա Աղամյանը (68) եւ Կարեն Ալեքսանյանը (78) եւս երկու անգամ գրավեցին «Կիլիկիայի» դարպասը եւ հաղթանակ բերեցին իրենց թիմին:

«Ցեմենտ»-«Դվին»՝ 5-1: Այս խաղն անսպասելի սկիզբ ունեցավ: 10-րդ րոպեին հյուրերի խաղացող Սերգեյ Էրզրումյանն առաջ մղեց իր թիմին: Սակայն շուտով ամեն ինչ իր հունի մեջ մտավ: Արդեն առաջին խաղակեսում հաշիվը 2-1 դարձավ հօգուտ «Ցեմենտի»: Իսկ հանդիպման երկրորդ կեսում արարատցիները եւս 3 անգամ գրավեցին հյուրերի դարպասը: Այս խաղում երկու անգամ աչքի ընկավ Շիրակ Սառիկյանը, մեկական անգամ Կարեն Ասատրյանը, Արա Հակոբյանը եւ Հայկ Հակոբյանը (վերջիններս «Դվինից» նոր են տեղափոխվել «Ցեմենտ») եւ «նեղացրեցին» իրենց նախկին ակումբակիցներին:

«Ղարաբաղ»-«Գյումրի»՝ 6-0: «Ղարաբաղը» տարավ հերթական հաղթանակը, իսկ «Գյումրին» կրեց հերթական արդեն 7-րդ պարտությունը: Հյուրերի դարպասը գոլեր խփեցին Մհեր Ավանեսյանը (3), Արարատ Ղազարյանը (2), Ատոմ Ավետիսյանը (1):

«Երեւան»-«Էրեբունի»՝ 0-0: Սա տուրի միակ խաղն էր, որի ընթացքում հաշիվը չբացվեց: Ակնատեսների վկայությամբ, «Նաիրիս» մարզադաշտում անցկացված այս հանդիպումը հետաքրքիր ու դիտարժան չստացվեց: Խաղն անցավ դաշտի տերերի առավելությամբ, նրանք ավելի շատ սուր պահեր ստեղծեցին: Երկու թիմերն էլ գոլ խփելու հնարավորություններ ունեցան, սակայն այդպես էլ դարպասներն անառիկ մնացին:

Մրցաշարային աղյուսակ

Մարտի 28-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Արարատ	7	6	1	0	12-1	19
2. Շիրակ	7	5	1	1	19-6	16
3. Ղարաբաղ	7	4	1	2	15-4	13
4. Ցեմենտ	7	4	1	2	11-6	13
5. Երեւան	7	3	4	0	9-5	13
6. Էրեբունի	7	3	2	2	6-5	11
7. Կիլիկիա	7	1	1	5	13-15	4
8. Դվին	6	1	1	4	11-17	4
9. Ձվարթնոց	6	1	0	5	5-10	3
10. Գյումրի	7	0	0	7	4-36	0

Առաջնության ռմբարկուները

Արա Աղամյան («Շիրակ»)	7
Արման Քարամյան («Կիլիկիա»)	7
Շիրակ Սառիկյան («Ցեմենտ»)	7
Կարեն Բարսեղյան («Արարատ»)	6
Հայկ Հակոբյան («Ցեմենտ»)	5

Առաջին խմբի մրցաշարում

Անցկացվեցին հանրապետական առաջնության առաջին խմբի մրցաշարի երկրորդ տուրի խաղերը: Ահա դրանց արդյունքները. «Նաիրիս»-«Լոռի» 0-0, «Լեռնագործ»-«Քասախ» 6-0, «Սուր»-«Ղարաբաղ-2» 2-1, «Արփա»-«Դինամո» 0-2, «Ալաշկերտ»-ՖԻՄԱ 1-3:

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Առաջատարը Արսեն Ղազարյանն է

Անցկացվեց խմբային հեծանվավազքի Հայաստանի առաջնության հերթական երկրորդ փուլը:

Փարաքար-Էջմիածին-Արմավիր-Բաղրամյան-Փարաքար խմբակային վազքի 110 կիլոմետրանոց մրցուղում հեծանվորդները երկար ժամանակ ակտիվ գործողությունների չէին դիմում, ասես առաջիկա լեռնային փուլերից առաջ խնայելով ուժերը, սակայն վերջնագծի մատույցներում սուր պայքար գնաց հաղթանակի համար: Առաջին տեղը գրավեց Արսեն Ղազարյանը (Ֆիզկուլտուրայի ինստիտուտի մարզական ակումբ), որը մրցաշարածությունն անցավ 2 ժամ 56 րոպե 33 վայրկյանում: Հաղթողից ընդամենը 5 վայրկյանով ուշ տեղ հասավ երկրորդ տեղը գրաված պատանի Տիգրան Կորկոսյանը («Հայաստան» մարզական միություն): Նշենք, որ մայրաքաղաքի Նար-Դոսի անվան դպրոցի աշակերտը վերջին շրջանում բավականին հաջող է հանդես գալիս հանրապետական ու միջազգային մրցումներում: Փուլում երրորդ տեղը գրավեց Արայոմ Գալստյանը («Աշխատանքային հերթափոխ»)՝ 2 ժամ 56 րոպե 43 վայրկյան:

Երկու օրվա արդյունքներով հեծանվավազքը գլխավորում է Արսեն Ղազարյանը, որի արդյունքն է 3 ժամ 29 րոպե 8 վայրկյան:

Բազմօրյա խմբային հեծանվավազքի երրորդ փուլը կանցկացվի այսօր: Առաջնության մասնակիցներն իրենց հարաբերությունները կորոշեն Երեւան-Արտաշատ-Սուրենավան-Սեւակավան-Նուբարաշեն մրցուղով անցնող խմբակային վազքում:

ԲՈՆՇՔԱՍՄԱՐՏ

Երեք ոսկի եւ մեկ արծաթ

Միջազգային մրցումներում հերթական անգամ հաջողության հասան Հայաստանի բոնցֆամարտիկները:

Լեհաստանի Բիգդոշ քաղաքում անցկացված երիտասարդական ավանդական՝ թվով 26-րդ մրցաշարում մեր մարզիկները շահեցին 3 ոսկե եւ 1 արծաթե պարգեւներ:

57 կգ քաշային կարգում գյումրեցի դինամոյական Արայոմ Հովհաննիսյանը երեք հանդիպում անցկացրեց եւ բոլորում վստահ առավելության հասավ մրցակիցների նկատմամբ: Եզրափակիչում նա պարտության մատնեց Թուրքիայի ներկայացուցիչ Սիմեդ Թուրանին: Արայոմը ճանաչվեց մրցաշարի լավագույն բոնցֆամարտիկ եւ պարգեւատրվեց հատուկ մրցանակով:

Աչքի ընկան նաեւ մեր ծանրքաշայինները: Աշխարհի երիտասարդական առաջնության բրոնզե մեդալակիր Լեւոն Փայտյանը (Երեւան, «Դինամո»), որը հանդես է գալիս 91 կգ քաշային կարգում, եզրափակիչում պարտության մատնեց լեհ Քշիշտոֆ Վլադարչուկն եւ կանգնեց պատվո պատվանդանի առաջին աստիճանին: Իր մրցակիցներին ոչ մի հույս չթողեց աշխարհի երիտասարդների չեմպիոն Բագրատ Օհանյանը: Գյումրեցի գերծանրքաշային այս բոնցֆամարտիկը վճռական մենամարտում մեծ առավելությամբ հաղթեց Մահմեդ Ունալին (Ռումինիա) եւ նույնպես ոսկե մեդալի արժանացավ:

Արծաթե պարգեւ նվաճեց 48 կգ քաշային կարգում հանդես եկող երեւանցի դինամոյական Արթուր Առաքելյանը: Եզրափակիչ մենամարտում, որն անցավ հավասար պայքարում, նա միավորների միայն մի փոքր տարբերությամբ զիջեց Պշեմիսլավ Ռոգնյակին (Լեհաստան):

Ցավոք, առաջին իսկ մենամարտում պարտություն կրեց եւ մեդալների համար պայքարին մասնակցել չկարողացավ Հայաստանի հավաքականի հինգերորդ անդամը՝ «Հայաստան» մարզական միության սան Հարություն Թովմասյանը (51 կգ):

Ավելացնենք, որ մեր հանրապետության ներկայացուցիչները (երիտասարդական հավաքականի ավագ մարզիչ՝ Դերենիկ Ոսկանյան) իրենց տեխնիկատակտիկական, ֆիզիկական պատրաստականությամբ բավականին լավ տպավորություն թողեցին բոնցֆամարտի մասնագետների վրա:

Լեհաստանում անցկացված մրցաշարին մասնակցելը բավականին օգտակար փորձամրցում հանդիսացավ մեր մարզիկների համար: Առջեւում պատասխանատու մրցումներ են, որոնցից նշենք եվրոպայի երիտասարդական առաջնությունը, որը կանցկացվի Խորվաթիայի Ռիժեկա քաղաքում, սեպտեմբերի 11-21-ը:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Մաղրիգալ: 2. Իմամ: 3. Սխտոր: 4. Բարակ: 5. Կաղա: 6. Թորոսյան: 9. Օդեսա: 13. Կաքնագույն: 14. Արգենտինա: 18. Դոմնա: 19. Նինվե: 24. Բրազիլիա: 26. Ազնվական: 28. Դափնի: 31. Բլղան: 32. Գողել: 34. Դիաբ: 36. Ագրա:

Հորիզոնական

7. Կարմրախտ: 8. Բարբարոս: 10. Բրամ: 11. Գորդյան: 12. Սրով: 15. Ազարակ: 16. Հրայր: 17. Ադանա: 20. Լիան: 21. Եղան: 22. Արամ: 23. Նեռն: 24. Բուրգ: 25. Ցարա: 27. Բաղեն: 29. Պարույր: 30. Անգինա: 33. «Գինդ»: 35. Բլինքոն: 36. Ամար: 37. Չինաստան: 38. Բեմարյան:



Ուղղահայաց

1. Համեմունք: 2. Մորմազգի թունավոր խոտաբույս: 3. Արածանի գետի այժմյան անվանումը: 4. Աղեխորավորների դասի անողնաշարավոր կենդանի: 5. XVII դ. Իտալիայում ստեղծված լարային կսմիթավոր նվագարան: 6. Օղու տեսակ: 9. Ֆրանսիացի նկարիչ, քանդակագործ (1869-1954): 10. Կոնաղղեղ: 16. «Լակմե» օպերայի հեղինակը: 17. Ոյազանովի ֆիլմերից: 21. Պ. Պոռչյանի նշանավոր վեպի հերոսուհին: 23. Արեւմտահայ բանաստեղծ, Մեծ եղեռնի նահատակ: 24. Պտղաբերության եւ որսորդության աստվածուհին հին հունական դիցաբանության մեջ: 25. Հայերենի բարբառ: 26. Մանկական առողջավայր Սեւ ծովի ափին: 27. Չիլիացի բանաստեղծուհի (1889-1957): 31. Մ. թ. ա. մոտ III դ. հին հունաստանում առաջացած փիլիսոփայական ուղղության ներկայացուցիչ: 32. Թռչունների թռիչքից կամ ծայնից գուշակություններ անելը:

Հորիզոնական

7. Նիկարագուայի մայրաքաղաքը: 8. Հին հնդկական 6 ուղղափառ փիլիսոփայական ուսմունքներից հինգերորդը: 11. Հնդկաստանում միջին դարերում կառավարիչների տիտղոս՝ մեծ իշխան: 12. Հայ նկարիչ: 13. Ռուս կոմպոզիտոր, երաժշտական քննադատ, «Հուդիթ» օպերայի հեղինակը: 14. Երկփեղկանի փափկամորթ: 15. Մեծ արջի համաստեղության աստղ: 16. Ֆրանսիացի ֆիզիկոս եւ մաթեմատիկոս: 19. Ֆրանսիացի կոմպոզիտոր, «Պոն Կիխոտի» հեղինակը: 20. Բազալտը, անդեզիտը եւ այլ հրային ապարները կազմող հանքանյութ: 22. Հրահեղուկ զանգված: 28. 1920-21-ին Ադանայում հրատարակված եռօրյա թերթ, ապա կիսամյա հանդես: 29. Հեթանոսական տաճար Հայաստանում: 30. Հնագույն ժամանակներում Վերին կամ Հայոց Միջագետքում Միգդոնիա փոքրիկ պետության մայրաքաղաքը: 33. Հրապարակախոսական, գեղարվեստական գրական ժանր: 34. Իտալացի օպերային երգիչ: 35. Ուսմունք գեղագիտության մեջ, որը գեղարվեստական ստեղծագործությունը համարում է իրականության նմանեցում եւ վերարտադրում: 36. Յուտիսեր մոլորակի հայկական անվանումը:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ադրբեջանը պաշտպանում է ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգը

Ալիեւի ելույթը Վաշինգտոնի ռազմավարական հետազոտությունների կենտրոնում

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 27 ԱՊՐԻԼ, ՍՆՍՐՔ: Մարտի 26-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը ելույթ է ունեցել Վաշինգտոնի ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնում (CSIS-Center for Strategic and International Studies):

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը Ալիեւը ննդաղատության է ենթարկել ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած կարգավորման վերջին ծրագիրը: «Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ ընդհանուր պետության ստեղծում ենթադրող ծրագրի նախաձեռնողը Ռուսաստանն է: Սակայն միջազգային նորմերում դրա համանմանը գոյություն չունի: Ադրբեջանը երբեմն չի ընդունի այդ ծրագիրը, քանի որ դա, փաստորեն, նշանակում է Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչում», հայտարարել է Ալիեւը:

«Ադրբեջանը կձգտի հակամարտությունը կարգավորել Մինսկի խմբի շրջանակներում եւ համանախագահներից ակնկալում է նոր ծրագիր, որը կբավարարի հակամարտող երկու կողմերին», ասել է Ադրբեջանի նախագահը:

Խոսելով Ռուսաստանի մասին Ալիեւն իր բացասական վերաբերմունքն է արտահայտել 1993-1997 թվականներին Ռուսաստանից Հայաստան սպառազինության մատակարարման փաստերի նկատմամբ: «Սակայն Մոսկվան անտեսում է Ադրբեջանի կարծիքը զորահնի մատակարարումներին գումարած ներկայումս Ռուսաստանը բացահայտ Հայաստանին C-300 հրթիռային համալիրներ եւ ՄԻԳ-29 կործանիչներ է մատակարարում: Այդ ամենը խախտում է խաղաղությունն ու կայունությունը Կովկասում լուրջ սպառնալիք ստեղծելով Ադրբեջանի անվտանգությանը: Մենք վճռականորեն բողոքում ենք Մոսկվայի նման գործողությունների դեմ», հայտարարել է Ալիեւը: Նա ավելացրել է նաեւ, որ «Հայաստանում ռուսական ռազմակայանների առկայության առնչությամբ Ադրբեջանի բողոքներին ռուսական կողմը պատասխանում է իբր ՆԱՏՕ-ի կողմից առկա սպառնալիքով: Մենք գտնում ենք, որ Ռուսաստանը Կովկասում սխալ քաղաքականություն է վարում»:

Անդրադառնալով նավթի թեմային Հեյդար Ալիեւն ասել է, որ թուրքական կողմի հետ պայմանավորվածությունների համաձայն, երեք ամսվա ընթացքում կլուծվեն Բաքու-Ջեյհան նավթատարի կառուցմանն առնչվող ֆինանսական եւ տեխնիկական հարցերը, որից հետո կսկսվի նախագծի իրացումը:

Ալիեւը նշել է, որ «որոշակի ուժեր» դժգոհ էին, որ Ադրբեջանը Կասպից ծով է հրավիրել Արեւմուտքին եւ, ամենից առաջ, ԱՄՆ-ին: Նրանք, ովքեր դժգոհ էին Ադրբեջանի այդ ռազմավարությունից, հնարեցին Կասպից ծովի կարգավիճակի խնդիրը: «Ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ 1994-95 թվականներին կատարված պետական հեղաշրջման փորձերը Ադրբեջանի իշխանությունն նավթային ռազմավարությունը կասեցնելու նպատակ էին հետապնդում», ասել է Ալիեւը:

«Վերջին ժամանակներս մի շարք երկրների մամուլում ենթադրություններ են հնչում այն մասին, թե Կասպից ծովում փոքր նավթ կա եւ, թե դրա պաշարների մասին նախնական տվյալներն իրականությանը չէին համապատասխանում: Այդ բոլոր պնդումներն անհիմն են, Կասպից ծովում բավականաչափ նավթ կա, եւ շուտով բոլորը կհամոզվեն ադրբեջանական նավթի մեծ հեռանկարների հարցում», ասել է Ալիեւը:

Խոսելով ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների մասին Ալիեւը նշել է, որ Ադրբեջանը մեծապես կարեւորում է Դաշինքի հետ հարաբերությունները «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում եւ պաշտպանում է ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգը:

SIBLEY INTERNATIONAL · USAID · AED

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Կրթական զարգացման ակադեմիան (AED) եւ Sibley International-ը

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի երրորդ հանդիպումը կկայանա **մայիսի 3-ին, ժամը 11:30-ին** Թեքեյան մշակութային կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպումը կվարի «Լենդ բանկի» գործադիր փոխտնօրեն

Ալեքսանդր Ֆրունջյանը:

Թեման **«Լինսի եւ Եվրասիա հիմնադրամների, Համաշխարհային բանկի, USAID-ի, UMCOR-ի կողմից իրականացվող փորձ եւ միջին ձեռնարկությունների վարկային ծրագրերը»:**

ARMENTEL

ԱՐՄԵՆՏԵԼԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ է ՄՐՑՈՒՅԹ

«TAOS-N» ծրագրով I փուլի Երեւան, Աբովյան, Չարենցավան, Հրազդան, Սեւան, Դիլիջան, Վանաձոր, Ստեփանավան եւ Տաշիր քաղաքների մեջ կապի կոյուղու կառուցման եւ վերակառուցման շինարարական աշխատանքներ կատարելու մրցույթին (տենդերին) մասնակցել ցանկացող կազմակերպությունները 03.05.99 թ. ժամը 12-ին պետք է «Արմենտել» ՀՁ տեխնիկական գլխավոր տնօրենի ընդունարան (հասցեն՝ Սարյան 22, 11-րդ հարկ, սենյակ 1102) ներկայացնեն իրենց հայտերը՝ փակ եւ կնքված ծրարներով:

Կազմակերպությունների կողմից անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ տեղեկատվությունը.

■ Պետական լիցենզիայի պատճենը՝ տվյալ աշխատանքները կատարելու համար:

■ Տվյալներ կազմակերպության ֆինանսական վիճակի մասին (հաշվարկային հաշվում, եղած գումարի չափը, դեբիտորներ կրեդիտորներ առանձնացված անուններով եւ գումարներով եւ այլն):

■ Տվյալներ աշխատողների քանակի եւ մասնագիտությունների մասին:

■ Ինժեներատեխնիկական աշխատողների ցուցակը՝ անուն, ազգանուններով եւ մասնագիտություններով:

■ Տվյալներ իրեն պատկանող բոլոր մեխանիզմների մասին (անվանումը, տարեթվերը):

■ Տեղեկություններ իրեն պատկանող ենթակա արտադրամասերի մասին (ինչ է արտադրում եւ հզորությունը):

Կազմակերպությունը պետք է գրանցված լինի պետական ռեգիստրում առնվազն 1,5 տարի եւ պետք է ներկայացնի այդ ժամանակահատվածում որտեղ եւ ինչ ծավալների նմանատիպ աշխատանքներ է կատարել:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ի լուր լրագրողների

Մամուլի ազգային ակումբը «Հայաստանը եւ ընտրությունները» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման «Հզոր հայրենիք» կուսակցության նախագահ Վարդան Վարդապետյանի հետ:

Հանդիպումը կկայանա ապրիլի 28-ին, ժամը 15:00-ին, «Հոլսթեն» սրճարանում (Փավստոս Բուզանդի 1/3):

տաա

ATTENTION

Fund for Armenian Relief (FAR), Armenia branch of Eastern Diocese of the Armenian Church of America offers employment opportunity for the following post:

Title: Program Director of the Children's reception Center

Accountability: Directly accountable to the Executive Director of the Yerevan Office of Fund for Armenian Relief (F. A. R.)

Qualification: Masters Degree in Social Work, Psychology or related field
Minimum of 3 years experience in some area of admininstration
Minimum of 3 years experience in services to children/youth
Must be able to communicate in English

Summary of position:

The Program Director will have primary responsibility for the overall administration the Children's Reception Center and any program that the Center offers to children and their families. She/he will be responsible for the development and implementation of program policies and procedures; recrutment, hiring and retention of the Center, admission decisions; public and community relations.

Please deliver your CV and cover page to the office of Fund for Armenian Relief (FAR).
Applications should be addressed to Director of FAR, Armenia branch.
Closing date 2 May, 1999

Address: FAR, 22 Khorenatsi St., Yerevan, Republic of Armenia
Tel: 52 66 60, 56 43 74
Fax: 151-862
E-mail: far@arminco.com

BULVINOS | **Bulvinos Chemicals LLC**

JOB OPENING!

Following positions are available now.
Prospective candidates can apply with their CV-s, photograph and 2 references to Tekeyan Centre from Monday 26/4 to Wednesday 28/4 - afternoon, 4-6 pm. Tel: 480201, 480171

Advertisement & PR Officer.

Requirement: Excellent knowledge of English, Russian & Armenian, written as well as spoken. Outwardly character, presentable personality with organizational skills. Previous experience in PR field is a must.

Chemical Marketing Officer.

Requirement: Good knowledge of English and Russian, written as well as spoken.
Chemical or medical background, ready to travel, with responsible and self-motivated attitude.

Research and Development Chemist.

Requirement: Good knowledge of English, written as well as spoken, for communication and study of chemical literature. Chemical or medical background. Be able to work in a team.

For all 3 positions excellent remuneration for the right candidate.

ՀԵՌՈՒՏԱՏԵՍԱԳՐԵՐ

28 ապրիլ

9.00 Հայլուր
9.20 Բարի լույս, Հայաստան
10.20 Հեռուստասերիալ «Մոխրոտը»
11.15 Արտակարգ ալիք
11.25 Գ/Ֆ «Անտպասելի ամուրոդ»
13.00 Հայլուր
13.15 Միասին («Միր»)
17.00 Հայլուր
17.20 Տուն-տունիկ
17.40 Հեռուստասերիալ «Մոխրոտը»
18.35 Պարմանի
19.00 Ընտրաշրջ
Արբանյակային հեռարձակմամբ
19.00 Գ/Ֆ «Որտե՞ղ էիր, մարդ ասածո» (3-րդ մաս)
20.15 «Մուսա լեռ»
21.00 Հայլուր
21.30 1 լուր
21.40 Հեռուստակատալոգ
21.45 Այսօր
22.10 36.6
22.35 «02»
23.10 Տագնապ
23.40 Հենց այնպես
00.00 Հայլուր
00.15 Արտակարգ ալիք

9.00 Տոմար
11.00 Գ/Ֆ «Օնասիս» (III մաս)
19.00 Մուլտեր
19.30 Սուրհանդակ
19.50 Գիտաստղեր
20.15 Կամ... կամ
21.05 Նժար
21.30 Սուրհանդակ
22.00 Քաղաք
22.35 Ռիսկի գործոն (մաս II)
23.30 Սուրհանդակ
00.00 Անդորր
00.05 Մի անգամ
00.10 Մութ սենյակ
00.30 VIDEOART PLUS
00.45 Գիշերային կինոտրահ. Ռոբերտ Հաուերը եւ Նաստասիա Կինսկին «Լուսնյակ գիշերով» մելոդրամում
02.30 Սուրհանդակ

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
11.30-15.45 Բիզնես-TV
16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Տիեզերական ոստիկանություն»
16.45 Հրաշալի ընկերախումբ
17.00 Ջունգլիների կանչը
17.30 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Հանուն սիրո»
19.00 Նորություններ
19.15 «Դիմակներ» շոուն
19.45 Այստեղ եւ հիմա
20.15 Մարդը եւ օրենքը
20.55 Է. Ռադզինսկի. «Ռուսական խորվության արյունն ու ուրվականները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.45 Գ/Ֆ «Գնացքը կանգ է առել» (ռեժ. Վ. Արդուռաշիդով, դերերում Թ. Բորիսով, Ա. Սոլոնիցին)
00.30 Թերեւս
00.45 Սոլորությունների ընտրանի. «Դոկտոր Չյանի գայթակղությունը»
01.15 Գ/Ֆ «Դավադրություն ընդդեմ Հիտլերի»

8.00-10.45 Բարի լույս, Ռուսաստան
8.20 Բոլորի շուրթերին
8.45 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
10.15 Հերթապահ բաժանմունք
10.45 Հեռուստախանութ
11.00 Սպրանկներ փոստով
11.10 Սերիալ «Միլեդի»
12.00, 15.00, 18.00, 21.00, 02.35 Լուրեր
12.35 Հաղթանակի օրվան վավերագրական սերիալ «Ռուսաստանը կովի մեջ. արյունը ծյան վրա» (1-ին մաս)
13.30 Երկխոսություններ կենդանիների մասին
14.30 Խանութ բազմոցի վրա
15.30 Սերիալ երեխաների համար «Հրաշագործը»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 Երաժշտություն, երաժշտություն...
17.25 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Ստվարակ
19.00 Հոմեոպատիա եւ առողջություն
19.05 Կիրիլ Լավրովը, Եվգենի Կինդինովը «Շաղոտայի մանյակը» դետեկտիվ ֆիլմում (1-ին մաս)
20.25 Սերիալ «Միստր Բին սեւ օրը 4»
21.40 Սանրամասներ
21.55 Ինքդ քեզ ոեժիսոր
22.25 Իոսիֆ Կոբզոնը «Հրաժեշտ պետությանը» ֆիլմում (3, 4-րդ մասեր)
00.25 «Օվացիա» ռուսաստանյան ազգային երաժշտական մրցանակի հանձնման արարողությունը

«ՍՓՅՈՒՌ». ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Հեռախոսներ 569393, 581351

«Տիգրան Մեծ» հասարակության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 1038 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 26.04.1999 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@